

Մ. Լ. ՊՈՒԼՏՆԱԳԵՆ

ԿՈՍՏԱՆՍՆԱԿԱՆ
ԿՈՍՏԱՆՍՆԱԿԱՆ

1956

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I. ՅԱՌԱՋԱԲԱՆ

II. ՆԵՐԱԾԱԿԱՆ

Ա. Հայաստանի ու Կիլիկիոյ քաղաքական ու տնտեսական վիճակը

Բ. Երզնկա քաղաքը

Գ. Գրականութիւն եւ սշակոյթ

- Հայ Գրականութեան աստիճանական զարգացումը

- Ժողովրդական քնարերգութիւն

III. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

IV. ԵՐՁՆԿԱՑԻՒ ՏԱՂԵՐՈՒՆ ԲՆՈՅԹԸ

Ա. Կրօնական

Բ. Խրատական

Գ. Բնութեան նուիրած տաղեր

- Գարունը

- Արեգակի եւ լոյսի բանք

- Բանք յերկու դէմս

- Բանք յաղագս Արեգակեան Արդարութեան

Դ. Վարդ ու սոխակի սիրավէպը

Ե. Սիրոյ բանք

V. ԻՄԱՍՏԱԿԱՆ ԱՍՔԵՐ

VI. ԱՆՁՆԱԿԱՆ ՎԻՇՏԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

VII. ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ԵՐՁՆԿԱՑԻՒ ՄՕՏ

VIII. ԸՆԿԵՐԱՅԻՆ ՔՆԱՐԵՐԳՈՒՆ

IX. ԵՐՁՆԿԱՑԻՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

X. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐԱԴՐՈՒԹԻՒՆԸ

XI. ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՉԵՒԱԿԱՆ

ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

XII. ՊԱՐՄԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ


ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

XIII. ԵՐԶՆԿԱՑԻԻ ՏԱՂԵՐՈՒՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

XIV. ԼԵԶՈՒՆ

XV. ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆԸ

XVI. ՎԵՐՉԱԲԱՆ



I. ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երբ Հայ տղուն յիշողութիւնը կը տրամադրուի անհամար ֆորմիւլներու, անճոռնի բառերու եւ օտար լեզուներու ըսելու ձեւերուն, շատ քիչ տեղ կը մնայ մայրենի լեզուին եւ մանաւանդ գրականութեան:

Օտար երկիր մը: Մատենագրութեան դասընթացքին առջեւ փակ դուռ մը կը գտնուուի: Չէ՞ որ ուրիշ բաներ կան սորվելիք...ու այս թէզը վերջին մխիթարանք մըն է:

Հիմա կը հասկնամ այն աշխատանքը որ մեր գիտնական ուսումնասիրողներուն սեփականութիւնը եղած է: Միայն մէկ ամիս: Շատ երկար. նոյն ատեն կարճ: Շատ նեղ միջոց մը անոնց համար որոնք կ'ուզեն խղճմտնաբով աչք յոգնեցնել, որոնք իրապէս կը սիրեն իրենց անցեալի նշանակութիւնը:

Սա քանի մը տասնեակ էջերը չեմ գիտեր ի՞նչ կոչել: Թէ՞գ. թերի բառ մը: Կարդացի ու գրեցի: Յաճախ այնպիսի տաղերու հանդիպեցայ որոնց գեղեցկութիւնը անարատ պահելով թուղթին յանձնեցի: Ըսի ինչ որ կը տեսնեմ: Լեզու՞ն, տաղաչափութիւնը. չէի գիտեր, ուրիշներուն ըսածը կրկնեցի:

Ուրեմն սա քանի մը թերի էջերն են մութ ժամերու բարի գողերը: Բայց ես գիտեմ իմ թերութիւններս:

Ապրիլ-Յունիս, 1956

II. ՆԵՐԱԾԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Ա. Հայաստանի ու Կիլիկիոյ քաղաքական ու տնտեսական վիճակը

Ճեղքազիւսան, որ ցեղով թուրք կը համարուի, ԺԳ դարուն սկիզբը Ասիոյ մէջ իր մականին տակ առաւ Թուրք, Մոնկոլ, Թունկուզ եւ շատ մը ուրիշ վայրենի ցեղեր, որոնք դարձան պատմութեան ակնէն բարբարոս արշաւանքներուն դերակատարները:

Հայաստան, ինչպես միշտ, Արեւելքէ հոսող յորդաներուն առաջին հանգրուաններէն եղաւ: Առաջին մուտքը դեկավարած էր Չարմաղան գօրավարին կողմէ: Անթիւ մարդիկ ջարդելէ եւ ատերելէ յետոյ շատ մը քաղաքներ, ինչպէս Գանձակ, Լորի, Անի, Կարս, տէր եղաւ երկրին (1236): Չարմաղանին յաջորդեց Բաշուի գազանային արշաւանքները:

Այս գրաւումները մեծ հարուած հասցուցին երկրի տնտեսական ու քաղաքական կեանքին: Ժամանակակից պատմիչները ցնցող Մանրամասնութիւններով նկարագրած են ժողովուրդին հասած սոսկալի աղէտները՝ գանգուածային կոտորածները, ծանր հարկերը, կողոպուտն ու յափշտակութիւնները:

Մոնկոլներու ներխուժումէն մասնաւորապէս տուժեցին Չաքարեաններու տիրապետութեան տակ գտնուող Հայաստանի շրջանները:

Գանձակեցիներ, որ ժամանակաշրջանի պատմիչն է, մանրամասն նկարագրուած է արշաւանքներու դաժան հարկահանութիւնն ու հարստահարութիւնը:

Կիլիկիոյ Հեթում թագաւորը դժուարին ժամանակի մը մէջ գահ բարձրացաւ: Տեսնելով թաթարական վայրագ ցեղերու արագ եւ անզսպելի յառաջխաղացքը եւ անդիմադրելի ուժը, շուտով հասկցաւ բէ իր փոքր թագաւորութիւնը դիւրին որս մը պիտի ըլլար անոնց, ուստի Բաշու գօրավարին, որ Գոնիա կը գտնուէր, պատգամաւոր դրկելով առաջարկեց հարկատու եւ զինակից ըլլալ: Բաշու հաւանեցաւ:

Ասոր իբր արդիւնք Մոնկոլներու տիրապետութեան ամբողջ շրջանին քաղաքական եւ տնտեսական տեսկետո համեմատաբար լաւ վիճակի մէջ էին Կիլիկեան հայկական պետութիւնը, եւ Հայաստանի արեւմուտքն ու հարաւը գտնուող շարք մը քաղաքներ՝ Երզնկա, Սեբաստիա, Ամիդ եւ այլն:

Ուրեմն այս խաղաղ շրջանին բարքաւան կացութեան իբր հետեւանք Կիլիկեան հայկական անկախութիւնն ու պետականութիւնը, ինչպէս 12-րդ դարուն, նոյնպէս եւ 13-14րդ դարերուն, հանդիսացան հայ մշակոյթի զարգացման կարեւոր ազդակներէն մէր:

Բ. Երզնկա քաղաքը

Հնագոյն դարերէն իվեր Երզնկա (հին անունով՝ Երիզա, Երեզ) եղած է կրօնական նշանաւոր կեդրոններէն մէկը: Եղած է կոապաշտական եւ սպա քրիստոնէական կեդրոն: Նշանաւոր եղած է Սեպուհ լեռը իր Ս. Լուսաւորիչի եւ այլ վանքերով: Թաթարներու տիրապետութեան շրջանին Երզնկա կարեւոր դեր կը խաղայ իբրեւ սահմանգլխի քաղաք մը:

Բլլալով առեւտրական ճամբուն մեծ կեդրոններէն, ունեցած է տնտեսական քարգաւաճ վիճակ մը: 13րդ դարու կեսին, Երզնկա քաղաքը եւ իր շրջակայ վանքերը եղած են ծաղկած դրութեան մը մէջ: Այս շրջանին երեւցած են քանի մը նշանաւոր եկեղեցականներ եւ գրագէտ վարդապետներ: Այդ բացառիկ դէմքերէն է ահա Կոստանդին Երզնկացին:

Գ. Գրականութիւն եւ մշակոյթ

• Հայ Գրականութեան աստիճանական զարգացումը

Հայ մատենագրութիւնը որ համաշխարհային առումով մեծ նշանակութիւն ունի, ամբողջ դարբե արտադրած է զուտ կրօնական, վարդապետական, պատմական եւ քիչ անգամ իմաստասիրական գործեր: Ներկայ չեն հոն գրողին անձը, ապրող ժողովուրդը իր առօրեայով իր պայքարով: Չկայ մարդը իր յուզումներով եւ ապրումներով:

Գրողը չունի գաղափարները յայտնելու ազատ թոյլից: Միջազգային ընդունուած գաղափարներն ու հաւատալիքներըն են որ կը կրկնուին տարբեր ոճերով: Այս պայմաններուն տակ է որ իրաւ տաղանդը երեսան կու գայ:

Վանքերո աճումով կը շատնայ նաեւ գրականութիւն կարդացող Եւ պաշտպանող մարդոց թիւը: Ասիկա պատճառ կ'ըլլայ գրականութեան աստիճանական աշխարհականացման:

Առաջին գրուածքը որ մարդը կը ներկայցնէ *Մատենան Ողբերգութեանցն* է: Հոգեկան փոթորիկին երկարաշունջ մըմունջն է տրուած հմայող եւ լեցուն ոճով մը քիսած Նարեկացիի անհատնում զգացումներէն: Բայց այս նոյնիսկ չի ներկայցնէր մարդը իր բնականոն վիճակին մէջ: Հոն, միայն Նարեկացին կը

տեսնուի, յախտենական կեանքի սարսափներէն ու պատիժներէն սուկացող Հոգիին ողբերգութեամբ:

Ներսէս Շնորհալի որ նշանաւոր է իր շարականներով եւ խրատական ոտանատրոներով ունի նաեւ առականեր, որոնք իրապէս *հանելուկներ* են գրուած, ժամանակի խօսակցական լեզուով, մասամբ նոյնիսկ *ժողովրդական տարրերով*: Շնորհալի - որ արդէն իսկ ժողովուրդին մօտիկ մարդ էր զանոնք գրած է, ինչպէս ինքն իսկ կ'ըսէ, որպէսզի հաւաքոյթներուն ու խնճոյքներուն մէջ հեթանոսական երգերուն ու մատմուածքներուն տեղը զարասեն:

Մխիթար Հերացին իր «Ջերմանց Մխիթարութիւն» կոչուած բժշկական աշխատութեամբ, որ գրուած է ժամանակի խօսակցական լեզուով, Ներսէս Լամբրոնացին, Մխիթար Գօշը, Վարդան Այգեկցին, կու գան մեզի ըսելու թէ զոտ եկեղեցական ոգին իրենց մէջ արդէն իսկ մարելով վրայ է:

Առակներուն հետ միաժամանակ կը զարգանայ *խրատական* եւ *ինաստասիրական* բանաստեղծութիւնը: Ասոնք խրատական բանաստեղծութիւն ըլլալով հանդերձ երբեմն իսկական քնարերգութիւններ են որովհետեւ գրուած է զգացում ձեւով, ուժեղ եւ զունազեղ արտայայտութեամբ: Տակաւին կրօնական տարրը իր զօրաւոր ազդեցութիւնը ունի:

Սակայն *ժողովրդական ոգին* կը գտնուի, հասարակ դասին իրական կեանքը՝ փոխուած աշխարհայեացքով, յաճախ կենդանի խօսակցական լեզուով: Չկայ այլեւս հին եկեղեցասիրութիւնը: Հին ճգնաւորական ուղղութիւնն արդէն երբեմն ծաղրի առարկայ կը դառնայ, հաւատքի վեճը իր հետաքրքրութիւնը կորսնցուցած է: Երեսան կու գայ կեանք մը որ զուարթ, ծիծաղող ու ծաղրող է, զուարճացնող:

• **Ժողովրդական քնարերգութիւն**

Այս ամէնուն հետ միասին կը տեսնենք թէ 13-րդ դարուն արդէն անհատը ընդհանրութենէն անջատուելով կը ստանայ իր արժէքը ու կը ցուցադրէ ինքզինք: Տրուած է արդէն իսկ նոր դարաշրջանի մը նշանը: 13-րդ դարուն ժողովուրդին ընկերային եռանդուն գործունէութեան վրայ իր ազդեցութիւնը կը ձգէ որ արտայայտուի գրականութեան բովանդակութեամբ՝ հակա-աւատապետական գաղափարներու զարգացմամբ: Այդ

Ժամանակաշրջանին իհարկէ եկեղեցական կրօնական բանաստեղծութիւնը չընդհատուեցաւ, բայց գեղարուեստական որակով շատ թուլցաւ եւ այլեւս չկրցաւ տալ յիշելու արժանի դէմք մը: Աչքի զարնող բանաստեղծներէն շատեր սկսան գրել աշխարհիկ մոթիֆներով եւ ժողովուրդին խօսակցական լեզուով՝ միջին հայերէնով:

Կը ծնի *անձնական բանաստեղծութիւնը*: Բանաստեղծը ինքզինք կ'երգէ, իր սէրն ու ատելութիւնը, իր բախտն ու դժբախտութիւնը: Մարմնին կը տրուի իր իրաւունքը որուն հետ կը սկսի *բնութան եւ սիրոյ երգը*, վարդ ու սոխակի պատկերով կամ առանց այլաբանութեան: Եւ վերջապէս կը բարձրանայ աշխարհի ունայնութեան երգը, իբրեւ մխիթարութիւն ընկերային կամ ազգային անարդար եւ անհաւասար դրութեանկ ամ իբրեւ վախճան անհատական տանջալից կեանքի, կամ իբրեւ սարսուռ գերեզմանի առջեւ:

Յատկապէս երեք բանաստեղծներ աչքի կը զարնեն 13-14-րդ դարերուն մէջ: Ֆրիկ, Յովհաննէս եւ Կոստանդին Երզնկացիներ: Կոստանդին զգայուն բանաստեղծ մըն է, աւելի բնարերգու քան բարոյախօս: Մեր սիրոյ երգը որ սկսած էր Աստուածածնի գովերգութեամբ, ապա վարդ ու սոխակի պատկերով, Կոստանդինի ձեռքով կ'ազատուի այլաբանութենէն: Իսկ եթէ հետագային տակաւին կը շարունակուի այլաբանական ձեւը այդ պարզ հաճոյքի համար է:

Եթէ մեր բանաստեղծութիւնը այսպէս շուտ թօթափած է աստուայետական ոգին անոր պատճառը անշուշտ ցեղին ընդունակ բնատրութեան եւ իր հայրենիքի դրութեան մէջ պէտք է փնտռել:

Ուրեմն Ֆրիկ եւ Երզնկացի մեր հին գրականութեան մէջ կը բանան նոր թուական մը:

III. ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Ինչպէս մեր շատ մը հին հեղինակներուն, նոյնպէս Երզնկացիի ամբողջական կենսագրութիւնը չունինք: Ինչ գաղափար որ ունինք իր կեանքին ու գործունէութեան մասին, իր տաղերուն մէջ եղող ակնարկութիւններ են եւ յաճախ՝ ենթադրութիւններ:

Իր քերթուածներէն մէկուն մէջ կ'ըսէ թէ ծնած է Երզնկայի մէջ: Ծննդեան թուականը յայտնի չէ բայց կ'ենթադրուի ըլլալ ԺԳ դարու երկրորդ կէտը՝ 1250-60 –ի շրջանը:

Պատանի հասակին Երզնկացի մտած է ծննդավայրին շուրջը գտնուող Վանքերէն մէկը եւ դարձած վանական: Սակայն, իր բանաստեղծելու կարողութիւնը կը պարտի ասելի բնատուր ձիրքինքան վանքի տուած ընդհանուր զարգացումին: Ըստ իրեն տեսիլքէ մը վերջ կոչում ստացած է բանաստեղծութիւններ գրելու:

Կոստանդինի տաղանդը իրեն շատ վնաս կը հասցնէ: Նախանցորդներուն կողմէ կը հալածուի, որուն հետեւանքով ստիպուած կ'ըլլայ իր ստեղծագործութիւնները ներկայացնել իր իր տեսած տեսիլքներուն արդիւնքը:

«Ոմանք չարախօսին զինէն վասն նախանձու, թէ ո՞րպէս խօսի սա աշապիսի բան, զի վարդապետի չէ աշակերտել. զի այլ է աշխատիլն եւ այլ է շնորհքն ի հոգւոյն. զոր ես պատմեմ ձեզ յաղագս տեսլեան իմոյ, զոր տեսի զարմանալի տեսիլ, մինչ ի վանք կայի հնգետասան ամաց, զոր տեսի մի արեգնագգեստ եւ լի լուսով:»

Բանաստեղծը գեղեցիկ կերպով բացատրած է, թէ ինչն է իր դէմ եղած հալածանքին վիճակը: Վանականները չարութեամբ ու նախանձով լեցուած են որովհետեւ ան աշխարհիկ մարդոց համար «քաղցրահամ» բաներ ը գրէ: Այս պատճառով է որ Երզնկացիի տաղերուն մեծ մասը ողբ ու գանգատ է:

Երզնկատի ուրիշ տրտմութիւն մը եւս ունի: Զրկուած է ընտանիքէ եւ բարեկամներէ: Իր միակ անկեղծ բարեկամը եղած է Ամիր Փիլինը: Կրնայ ենթադրուիլ որ Ամիր Փոլին Երզնկայ եկած է եւ Կոստանդինի ընկեր եղած է, միեւնոյն վանքին մէջ, որովհետեւ *հոգետոր եղբայր կոչումը* այս իմաստով ըսուած է:

Հակառակ բոլոր հալածանքներուն իբր հակադէտութիւն ինքզինքին համբերել կը յորդորէ հոգետոր կեանքի ապագայով միսիթարուելով:

Կոստանդին Երզնկացի եղած է զարգացած բանաստեղծ մը: Այս մասին կը վկայեն ոչ միայն իր տաղերը, այլեւ իր ուսուցիչ ըլլալը: Յիշատակարաններու

տեղեկութեանց համեմատ, ԺԳ դարու սկիզբը կը գտնենք զինք Ս. Լուսաւորիչ վանքին մէջ, իբրեւ ուսուցիչ:

Մահուան թուականը եւս անյայտ է. 1336-ին պետք է կենդանի եղած ըլլայ իբրեւ սպիտակամօրու ծերունի մը: Հաւանական է որ իր յուսախափ կեանքին վերջին տարիները անցուցած ըլլայ պաղ Ու մռայլ խուցի եւ քարայրի մը մենաւորութեան մէջ լքուած:

IV. ԵՐԶՆԿԱՑԻԻ ՏԱՂԵՐՈՒՆ ԲՆՈՅԹԸ

Ա. Կրօնական

Գրաբարով գրուած մեր հին գրականութեան մէջ կան մեծ գեղեցկութիւններ: Բայց այդ նիւթերը որոնք մշակուած են գրեթէ միշտ եղած են կրօնական, վարդապետական, պատմական մերթ՝ գիտական եւ իմաստասիրական: Առաջին երկու հայ բանաստեղծները որ իրենց քերթուածները գրած են ժողովրդական լեզուով եւ որոշ չափով միտքի ազատութեամբ, Կոստանդին Երզնկացին ու Ֆրիկն են:

Մակայն, ըլլալով վանական մը Երզնկացի չէր կրնար իր նախորդներուն չհետեւիլ: Իր առաջին քերթուածը կրօնական գրուածք մըն է. Ս. Գիրքի պատմութեան բովանդակութիւնը ոտանատրոդ Հաճելի պատմուածք մը է՝ հետեւողութեամբ Մագիստրոսի եւ Ներսէս Շնորհալիի: Իր բանաստեղծական խանդովը ու գեղեցիկ իմաստներովը, Կոստանդին ընթերցողին կարծել կու տայ թէ ինք եւս ներկայ էր Ստեղծագործութեան, երբ՝

Կամարակապ խորանն ենկնից
առանց սիւնի հաստատեցան,
Գեղեցկութիւնք վայելչապէս
զարմանալի յօրինեցան
Ծաղկեալ երկինքն աստեղինօք՝
լուսաւորոք զարդարեցան
Ի գիշերոյ զարդ աստեղացն
եւ ի տուրնջեան արեգականն:

«Բան յաղագս անբաւելի սքանչելեացն Աստուծոյ զոր փոքր ինչ համարձակիմ
այապէս. ոգնեայ Քրիստոս»»: Կրօնական քերթուած մըն է՝ ուր Երզնկացի կը

հիանայ Աստուծոյ սրանչելիքներուն վրայ: Սակայն հոս է որ Աստուած կը տիրանայ իր արժանիքներուն՝ Կոստանդինի բանաստեղծական շունջով:

Աստուած անմահ արքայ մըն է կամ անշիջելի վառած լոյս մը: Բնութեան մէջ նմանը չկայ: Ան է սիրոյ հիմը:

Մերն ի քէն է, սիրուն ի քէն է
Համբերութեամբ կեպն է քէն է
Միտք ու խելք եւ խօսքն Ի քէն է
Ամենեցան բաշխող դու ես:

Ինչպէս միշտ հոս ալ իրք երթուածը կը վերջացնէ աղօթքի ձեւով չդաւանանելու համար կրօնական ու խրատական տաղերու սովորութիւններուն:

Տէ բիմ գրթած հայրըդ վերին,
Պահեա զծառայս ըզԿոստանդին.
Ինձ պարգեւէ զկենաց բարին
Ձի բուն բարուն շնորհող դու ես:

Տասներորորք տաղը՝ «Բան յաղագս լեզուի ու չդատել զընգերն որ է աս»,
թէն արտաքին ձեւին մէջ հին է եւ անբոյր սակայն ներշնչումով գրուած է:
Շատ հալածուած: Ինչո՞վ կը մխիթարուի: Կը բանայ Աւետարանը եւ
«Երանութեանց» գլուխը կը կարդայ եւ յետոյ զանոնք կը յանգատի:

Իբր եզրակացութիւն.

Համբերել պարտ է քեզի,
է Կոստանդին, ով նախատէ.
Գիտեմ որ շատ սուտ՝ անիրաւ
ու չար լեզու զքեզ խոցել է.
Թէ կոչիս ազատ որդի
հօրն Յիսուսի՝ Ի սուրբ սրբաւ,
Նայ խոնարհ ու հեզ պիտիս,
որպէս եւ Տէրն իսկ երանէ:

Բ. Խրատական

Երզնկացիի գրականութիւնը հարուստ է խրատներով եւ իմաստական
ասւերով: Խրատները ընդհանրապէս կրօնական ոգի ունին:

Իր երկրորդ քերթուածը խրատ մըն է, «Նորին Կոստանդէայ բանք»
խորագիրով: Բովանդակութիւնը իմաստասիրական է, իմաստութեան վրայ
ներբող մը:

Քանի հասնիս Ի մեծութիւն խոնարհ կացիր մարդկան ու ցած:
Որչափ լինիս դու իմաստուն շատ մի խօսիլ մէջ անգիտած:
Աղքատին մի բարկանալ, որ չը դատէ ըզբեզ Աստուած.
Քո ընկերին հոր մի փորել, թէ չէ այն քեզ կայ պատրաստած:

Ըստ երեւոյթին Կոստանդին իր երկրորդ բանքը յօրինած է այն ժամանակ, երբ
իր կրօնական ուխտը ըրած է. ան կը քարոզէ չսիրել այս աշխարհը, անցաւոր
բաներու ետեւէն չերթալ, եւ վերջը Աստուծմէ կը խնդրէ որ իրեն բաշխէ
երկնաւոր պարգեւը:

Գեղեցիկ տուներէն է մատւ.

Լսէ քեզ բան խիստ գեղեցիկ
ծաղիկ քաղած է ի բազմաց
Անմահութեան պըտուղն է սայ
որ է յերկնից յաշխարհս իջած,
Թէ ըզնորայ ճաշակն առնուս
կամ սէր ունիս՝ ես ծարաւած՝
Այլ չհաւանիս անցաւորիս
թողուս զամէն աշխարհս ի բաց:

«Խրատ հասարակաց պիտանի եւ օգտակար»: Չանձրանալի խրատ մըն է:
Նիւթական եւ հոգեկան բարիքները կը թուարկէ, եզրակացնելու համար՝ թէ ինչ
ձիրքով ալ օծտուած ըլլայ մարդ՝ պէտք է համեստ ըլլայ: Այս քերթուածին
գոյութիւնը կը պաշտպանուի միակ գաղափարով մը, մարդուն կը յորդորէ
ըլլալ՝ Մուրբ Գրիգոր մը «ի խոր վիրասպ»:

«Բան յաղագս անցաւոր մեծութեան, զի մահուան ժառանք են երկրաւորքս, եւ
ունայն է վայելչութիւն աշխարհիս»: Կոստանդին կ'ուզէ որ մարդիկ իրենց
սիրտը անցաւոր աշխարհին հետ չկապեն, քանի որ այդ աշխարհը զինքը
յաւիտեան չ'ի պահեր իր վրայ, մահուան օգնութեամբը՝ չ'ի թողուր սուլթանն ու
փատիշահն գահի վրայ, քանի որ օր մը անոնց դիգած զանձերը,
իշխանութիւնը՝ պիտի առնէ եւ թուրքն ու գրիչը իր ձեռքէն, քանի որ իր մէջ
պիտի քայքայէ վայելչակազմ մարմինները իրենց գոհարներով, քանի որ

լուսնի նման գեղեցիկ դեմքերը, որոնց սիրտը ուրախ էր, խօսքը զուարթ,
հիմայ ոչ աչք ունին ոչ լեզու:

Դարձեա են փոշի եւ ոսկերք են ցամաք,

Այն անձն որ պայծառ էր քան զձին սպիտակ:

Կոստանդին իր մարդասիրութենէն մղուելով կը յորդորէ չտարուիլ խաբող
Կեանքէն չկորսնցնելու համար յաւիտենական կեանք մը, որուն յոյսը
բերկրանք մըն է իրեն:

Գ. Բնութեան նուիրում տաղեր

Կոստանդին Երզնկացիի բանաստեղծական արժանիքը իր իսկական
բարձրութեան վրայ կարելի է գտնել անոր բնութեան նուիրում տաղերուն
մէջ: Հոս Երզնկացին կը փարաբանէ բնութեան զարթօնքը: Երկիրն է ամէն ինչի
հայր ու մարը:

Երկիրս է մայր աննըմանի

Ձինչ գեղեցիկ իրք՝ ծնանի,

Շատ բարութիւնք յինք սնանի,

Հանց որ փոին գեղեցկացել:

Իր այս շարքը քերթուածներուն մէջ արդէն կը տեսնենք կեանքի ու բնութեան
սիրահար բանաստեղծը: Ան իրացուցած է շատ աւելի յուզումով ու ճշմարիտ
կերպով տուած է Գրիգոր Նարեկացիի այն տաղասացութիւնը, որ իմաստով,
անձնական շեշտերով կ'երգէ ուրախ, լուսավառ բնութիւնը: Արդարեւ
այլաբանութիւնը կ'ազդէ մտքի պայծառութեան ու յստակութեան, բայց
Երզնկացիի քերթողութիւնը միայն խորագիրներով այլաբանական է,
իսկութեան մէջ ըլլալով օրհներգութիւն բնութեան եւ կամ այնպէս կը յօրինէ,
որ կարելի է եւ հոգեւոր, եւ մարմնաւոր նշանակութեամբ հասկնալ զայն:

Քանտ ու խաւար ձմռան կը յաջորդէ ուրախաբեր զարունը: Կը փչէ
հարաւային բարեբեր քամին, աշխարհէն կը վերանայ տրտմութիւնը.

Երբ որ հնչեց հողմն հարաւ՝

Ձինչ տրտմութիւն երկրէ տարաւ.

Հանց որ չկայ տեղ մի ծարաւ,

Ամէնն են բարութեամբ լցել:

Երկիրը կը կենդանայ, լեռն ու դաշտը կանաչ կը բուսնին, ծաղիկները երկարատե քմրութենէ կը սքափին ու կը զարդարեն իրինց անհամար գոյներով, դաշտերն ու ձորերը: Աղբիւրները յորդելով խաղ կ'ընեն:

Գարնան երգերուն մէջ բանաստեղծը նոյն ժամանակ լաւատես է, վիշտ ու քախիծ չի արտայայտեր, չի ժխտեր կեանքն ու աշխարհը:

• Գարունը

«Այս գարուն զգալուստն Քրիստոսի պատմէ առակօք»: Գարնան այս քեր թուածը այլաբանական կտոր մըն է որ կը պարզէ վերջին դատաստանի հեռանկարը: Ծաղիկներու երեւնալը իրեն կը թելադրէ մօտեցումը երջանիկ օրուան, որ հաւատացեալ հոգիին համար՝ իր յաիտենականութեամբը կը զանազանուի երկրաւոր գարուններէն: Վերակենդանացող ծառերուն քով կան չորցած ծառեր որոնք կը ներկայացնեն մեղաւորներու խումբը որ կրակին սահմանուած է: Սակայն երբեմն մեղաւորներու մասին խօսած ատեն գարնան պատկերէն կը հեռանայ եւ կը հետեւի հանրածանօթ կրօնական պատկերացումներուն:

Այս զաղափարը ճաշակաւոր եւ յտակօրէն չէ բացատրուած սակայն մեզ յաճախ անակնկալի կը բերէ.

Ինչո՞ւ համար թագաւոր է վարդը՝ ծաղկանց մէջ, - որովհետեւ փուշերու մէջ կ'ապրի եւ կը համբերէ: Կամ

Ծառքըն ծաղիկս ի վեր փըչեն
թէ կան դալար ու չեն մսած:

Իւրաքանչիւր ծառ երկինք կը նայի, զայն զուարթ կը տեսնէ, գոհութեան հառաչ մը կ'արձակէ, եւ այս իւրաքանչիւր հառաչը՝ ծաղիկ մըն է:

Վերջաբանը բանաստեղծութեան կէտը կը կազմէ եւ բացայայտ կրօնական բովանդակութիւն ունի: Վերջաբան մը է որ նախ իր նիւթին չի պատշաճիր եւ երկրորդ շատ երկար է:

ԺԵ. քերթուածը, որ 42 տուներէ կը բաղկանայ՝ նորէն Գարնան նկարագրութիւնն է այլաբանութեամբ, եւ թէւ նմանութիւններ ունի իր կարգ մը

ուրիշ քեր թուածներուն հետ՝ բայց նաեւ պակաս չեն գեղեցիկ եզական տողեր ու իմաստներ:

Երկիրը մութ էր, հիմա՝ դալարով զարդարուած:

Հեզ որոտայ ամբ ցողաբեր,
Կամար կապի յերկինս ի վեր
Հոսէ յերկիր ահեղ գարուն.
Հասար գերկիր են արբուցել:

Տիեզերական հարսանիք եւ պտղաբերներու ցնծութիւն է: Գոյնզգոյն ծաղիկներու ամբողջ ցեղեր երկիրը զարդարած են:

Ծովն դրբոտող առնու սիրով,
Խաղան գերունք յերկիր՝ ի ծով.
Ակունքը յորդոր գան պաղ ու հով,
Եւ ի Քարէն յառաջ բըխել:

Այծեամները խաղալով դաշտերն ու աղբիւրները կ'իջնեն եւ անասունները իրենց կապանքներէն կ'արձակուին: Թռչունները քաղցր ձայնով իսկ ծիծեռ նակը սաղմոսելով կու գայ: Կ'աճին ու կը ծնին ու պարի ելլելով երամներ կը կազմեն:

ԺՁ. քերթուածը՝ «Նոյն բան խորհրդով եւ ի յայլ դէմս տեսութիւն, գոր առակօք խօսի»: Կոստանդին նախորդ քերթուածին նկարագրական միօրինակութիւնը ընդհատելու համար, եւ կարծես յուսահատած՝ այս գարունը նորէն մարդկային լեզուով բացատրելու կարողութենէն, ինքը կը լռէ, ձգելով որ գարունը ինքն իր մասին խօսի:

Եւ հպարտ գարունը կը սկսի իր անձին գովերգութեան.

1. Այսօր եղայ հողմըն գարնան
Միրով հընչեմ ի բուրաստան.
Չինչ սառն ու պաղ Յուրտ ձըմեռան՝
Ի մեր տեսուս հալածեցան:
2. Այսօր իմ բանն է յորդորել
Չերդ ի քարէ ակն որ բըխիլ.

Բան գեղեցիկ կամիվ շինել,
Ձերայ հասար սիրոս ի հաւան:

3. Հրաման կու տամ ես ծաղկընուն
Փրռեն տերեւ խիստ գուն ու գուն.
Ձի է հասարակաց գարուն
Այլ բանդ չըկայ եւ որ զընդան:
4. Ձեզ աւետիք հասաւ բարու,
Ելել կու գայ վարդն Ի նորու,
Եւ մեզ բանայ դրուի սիրու`
Երբոր փրռի ի մեր դիպան:
5. Բըլբուլըն գայ` քաղցըր ձայնէ,
Միրով հարբած հետ վարդին է,
Յաչիցն Արեան արցունք հանէ
Վասն այն եղել շաքարբերան:
6. Վարդն նստաւ յաթոռ փառաց

Հոս գարնան խօսակցութիւնը արդէն ընտհատուած է, եւ Երզնկացի իբրեւ
անտանելի շատախօս մը, կը սկսի կրկնել ինչ որ ըսած էր վարդ ու սոխակի
մասին:

• Արեգակի եւ լոյսի բանք

Մեր բնութեան նուիրուած գրականութեան ադամանդներէն է: Խորագիրն է
«Բանք յերկու դէմս մտաց տեսութիւնք ի հոգի եւ ի մարմին, զոր առակօք
խօսի այսպէս»: «Մտակօք խօսի» ըսելու ձեւը ցոյց կոզ տայ որ այդ
բանաստեղծութիւնը յօրինուած է այլաբանական մեանութեամբ: Քրիստոնեայ
հաւատացեալի մը վսեմ ներշնչումով ստեղծուած առաւօտեան նկարագրութիւնն
է: Արշալոյսը մարմնացած է բանասկեղծին մօտ, հովուական երգի մը
փոխուած: Ամբողջ քերթուածը շարքն է հրապուրիչ պատկերներու որոնք կը
նկարեն բնութեան զարթօնը, լուազարդ շքեղութիւնն եւ կենդանութիւնն ու

շարժումը: Նոյն ատեն կը զգանք այն խոր սերը եւ խորագգաց սքանչացումը
որ ունի բնութեան հանդէպ:

Զար թիք ի յերագուտ,
բացէք զաչերտ ով կայք ի քուն,
Տեսէք մեջ գիշերիս
շատք՝ որ պահ մի չեն լել ի քուն
Անդադար ի շուրջ գալլով
կան հրամանաւ մի Աստուծուն,
Որ բանիս զերկրնք ի վեր
կամար կապել՝ երես քամուն:

Երբ բանաստեղծը կ'արթննայ կը տեսնէ ինչպէս գիշերը առաւօտեան: Կը դիտ
լուսինն ու լուսափայլ աստղերը: Կ'երեւին առաւօտեան առաջին
յայտարարները: Արուսեակը (* արեգակը) վեհաբար կը տարածէ իր լոյսերը
հրամայելով մնացեալ աստղերուն՝ հանգչիլ:

Մի աստղ ելաւ պայծառ
առջեւ Արուսեակին լուսոյն,
Ունէր լոյս զեղեցիկ
քան զաստեղացն այլ գերագոյն,
Ետես ըզնա լուսին
եւ հըրաման տայ աստեղնոյն,
Հաւասար ի մայր մըտան
նուազեցան յերենց լուսոյն:

Չերեսս երկնից երաց՝
երբոր ծագեց լոյսն արեւուն,
Տղայ երեսեցաւ,
քաղցր կոչի իրենն անուն,
Հոգի հաւասար երես շատոց
պայծառ լոյս աչերուն,
Ով սիրով մընաց լուսոյն
արեգակին առատուն:

Քաղցր է ծնունդ լուսոյն,
երանի տամ ես այն մարդոյն՝
Որ բաժին ինքն ունենայ

ի յայն լուսոյն առաւօտուն,
Թէ դուրն կայ երկնից
պարգեատու մի Աստուծուն:
Ի մեզ բացվի դուրն բարոյն:

Քանաստեղծը կը վերանայ բնութեան շքեղութեան առջեւ: Ամէն բարիք կը տրուի մարդուն, արեգակի ծագումով: Աստուած իր արարածներուն քաղցր ու սիրով լեցուած կը նայի: Առաւօտեան անուշ բուրմունքէն կը գինովնան հոգիները եւ մահը կը փոխուի յաւիտենական կեանքի: Եթէ սէր մը կայ անմահական որ հոգի տայ հոգիներուն, կ'ուզէ իրեն բաժին եղող տէրն ու հոգին առաւօտեան սիրոյն խառնել: Քանաստեղծը այնչափ տարուած է առաւօտեան լուսաճաճանչ շքեղութենէն որ ամէն ինչ, սէր, կեանք եւ նոյնիսկ կ'ուզէ որ իր մահը առաւօտեան ըլլայ:

• **Քանք յաղագս Արեգական Արդարութեան**

Քերթուածին խորագիրն է «Քանք յաղագս Արեգականն Արդարութեան, որ ծագեաց Ի հօրէ Միածին Որդին Քրիստոս, գոր առակօք խօսի»: Ինչպէս կը տեսնուի այս այլաբանական բնութեան նկարագրութիւնն է: Այլաբանութիւնը կը վերաբերի Քրիստոսին: Մեր քրիստոնէական գրականութեան մէջ առաջին անգամ է որ այսչափ խանդավար ու զգացուած ձեւով կը նկարագրուի արեգակի ծագումը եւ անոր սքանչելի ազդեցութիւնը բնութեան վրայ: Արեւապաշտ մը այսչափ երկիրաձօրէն պիտի չկրնար նկարագրել.

Ահա գիշերս էանց,
նշան եղեւ առաւօտեան,
Աստղըն պայծառ ծագեց,
աւետարտը երեկ լուսոյն
Խաւարըն հեքեցաւ
ու ցընծացաւ աշխարհիս ամէն,
Երնեկ ետուն միմեանց՝
որ արժանի եղեն լուսոյն:

Ձինչ որ Ի բանդ կային
եւ Ի խաւար Ի խոր զընդան՝
Նայ լոյս ծագեց նոցայ
յարեգականն Ի մեծ լուսոյս,

Երկիրս էր սառն ու պաղ
ու ցուրտ ձմեռն ու հողմային,
Ահայ եղև գարուն
յարեգականն Ի մեծ լուսոյն:

Երկիր կենդանացաւ
ու լեռն ու դաշտ կանաչ բուսան,
Ծաղիկ բերին ծառերն
յարեգականն ի մեծ լուսոյն,
Ծաղկունքն գարդարին
ազգի ազգի գոյնգոյնով,
Փռի վարդըն կարմիր
յարեգական ի մեծ լուսոյն:

.....
Է՞ր չէր ի զարմանալ,
ու կամ հարցուկ լինել բանիս,
Վասն այս արեգականս
ու իր պայծառ լըցեալ լուսոյն
Այս նո՛ր ծագեց մեզ լոյս
քան զարեգակն ու այլ պայծառ,
Չինչ լուսաւորք կային՝
ծառայ կոչին այն մեծ լուսոյն:

Ի լուսոյն ի սկըզբանէ
լի լուսով շարաւիղ ծագեց,
Լոյս ի լուսոյ ծընաւ
յարեգական ի մեծ լուսոյն:
Այս լոյսս ի յայն լուսոյն՝
որ ինքն է տէր ամէն լուսոյն,
Ու քազաւոր կոչի
՝ ու ամանուն լոյսն ի յիր լուսոյն:

Երկնից կամարն եղև
ի զարմանալ արեգականն,

Չի չէր տեսել հանց լոյս
կամ արեգակն ի յայն լուսոյն,
Երկիրը ցրնծացաւ
մեծ ատեօք ուրախացաւ,
Թէ անմուտ ծագեց մեծ լոյս
ու արեգակն ի յայն լուսոյն:

Ոմանք են անհոգի
աչքերով կուր եւ անյիմայ
Որ չեն ի հաւատալ
արեգական ու իր լուսոյն:
Խաւար կենօք կենան
ու զմբաշին յերազ քրնոյ:
Չունին մասուն լուսոյ
յարեգականն ի մեծ լուսոյն:

Ես չե մի հաւատալ
այն սուտ հոգոյն թէ ինքն լոյս՝
Որ չունի շարաիդ
յատրեգական ի մեծ լուսոյն՝
Որ ես լուսատրիմ
յարեգականն ի մեծ լուսոյն:

Երզնկացի իր դարու բացառուիւններէն է: Յառաջդիմական այն փոքր մարդոց խումբին կը պատկանի որոնք այդ աւատապետական մթութեամբ կաղապարուած դարուն կը տեսնեն «արեգակի ծագումը» մինչ ուրիշներ «չեն ի հաւատալ արեգական ու իր լուսոյն» ու «խաւար կենօք ու զմբաղին յերազ քրնոյ»: Պահպանողականութիւնը կը նշանակէ յետադիմութիւն: Իսկ աւատապետական դրութեան գլխաւոր յատկանիշներէն է պահպանողականութիւնը: Գոյութիւն ունին հեղինակութիւններ, որոնց հակառակի կը նշանակէ մեղք եւ պատիժ:

Երզնկացի ճիշդ այս հեղինակութիւններուն դէմ է որ կը պայքարի: Ծագող արեգակը անցնող Դարերու խաւարէն ծնած յառաջդիմութիւնն է: Ըստեր որոնք «են անհոգի աչքերով կուր եւ անյիմայ» չեն ուզեր հաւատալ այդ

փոփոխութեան եւ պահպանողականութեան երազագին աշխարհին մէջ կ'ապրին:

Երզնկացիի մօտ լոյսը իր նշանակութեան բարձրագոյն ու ազնուագոյն աստիճանին հասած է: Կը նշանակէ յառաջդիմութիւն: Եւ Երզնկատի ասոր հանդէպ ունի հիւժեցնող պաշտամունք մը: Ինչո՞ւ չէք զարմանար, կը հարցնէ Երզնկացի, այս արեւին վրայ որ պայծառ լիալիր լոյս մը ունի: Երկնի կամարը նոյնիսկ կը զարմանայ՝ առաջին անգամ իր վրայ տեսնելով այդ կախուած արեգակը՝ որ յառաջդիմութեան գալուստը կը պատկերէ:

Այս է Երզնկացին իր խորհրդապաշտութեան մէջ:

Գ. Վարդ ու սոխակի սիրավէպը

Ինչպէս տեսանք Երզնկացի խոր սքանչացում ունի լոյսին հանդէպ որուն հետ անհրաժեշտօրէն պէտք է երգուի սէր ալ, քանի որ քրիստոնէական աստուածը ոչ միայն «լոյս» էր այլ նաեւ սիրոյ աստուածը եւ «Սէր»։ Ան կը հաստատայ թէ ինչպէս լոյսը, նոյնպէս ալ սէրը աստուծմէ կը բխի: Եւ աստուածային սէրէն է որ կը ծագի արեգակը:

Թէ՛ Տէրն ի յարարածս

հայի քաղցր ի յիր սիրուն,

Չայն պահուն է որ լինի

նշան լուսոյն առաւօտուն

Առաւօտեան լոյսը ուրեմն ծնունդն է աստուծոյ հայեացքին եւ անոր սիրոյն: Ահա թէ ինչու լոյսն ու սէրը Երզնկացի իրարմէ չէր բաժնէր: Քայց ան առ անձնապէս ալ կ'երգէ սէրը: Միջնադարու այս խանդավառ բանաստեղծը, որ իր ներշնչումները բնութենէն ստանալով այլաբանօրէն կ'երգէ, չէր կրնար չօգտուիլ աշխարհիկ սիրոյ երգերուն ձեւերէն: Եւ իսկապէս՝ մեր կրօնական բանաստեղծութեան մէջ, ան կը կիրառուի *վարդ ու սոխակի սիրավէպը*, սիրոյ տարածուած այս այլաբանութիւնը:

Վարդ ու Սոխակի սիրավէպը տարածուած ու անելի լայն տեղ գրաւած է Երոսպական գրականութեան մէջ: Այդ բացատրելի է մեր երկրին քաղաքական կացութեամբ: մինչ Մեծ Հայաստանը բռնապետութեան տակ կը հիւժեք անդին Ֆրանսա կը յառաջդիմէր իր պալատական սիրերգութեանց մէջ եւ կը

գարգանային «ձիաուրներու» եւ «ազնուական օրիորդներու»
փոխ-յարաբերութիւնները:

Ուստի եթէ մեր մէջ քանի մը սիրաւպեր մնացած են պարզապէս անհատական
պոռթկումներու արդիւնք են՝ սէր գովերգելու համար:

Արեւմուտքն ալ ունի անշուշտ իր սիրոյ հզօր քերթուածները: Նոյնիսկ 14-րդ
դարուն: Բայց զանոնք համեմատելով Երզնկացիին հետ կը տեսնենք թէ մեր
բանաստեղծը գրած է առանց կախարդանքի ու յաւերժահարսերու: Ամէն ինչ
բնական ձեւով է հարկաւ, որոշ այլաբանութեամբ – ծաղիկներն են,
ամենագեղեցիկը վարդն է, որուն կը նախանձին միւս գեղուիկները:
Թռչունները տղաքն են: Մարդկային սիրահար զոյգին տեղ կան պլպուլն ու
վարդը: Գեղեցիկ փետուր հազած փոքրիկ թռչունները ծաղիկներու
բուրմունքէն հարբած հազար ձայնով կը քաղցրաձայնեն առանց լռելու: Ամէն
ինչ ուրախ է ու գարուն որովհետեւ սէրը ներկայ է իրենց մէջ: Ամէն ինչ
լեցուած է է սիրով, ամէն ինչ սիրով կ'ըլլայ ու գեղեցիկ է միայն սիրով:

Արեգակի լոյսէն կը բացուի վարդը որուն պայծառ տեսքէն կ'ուրախանայ
պլպուլը ու կը մոռնայ վիշտն ու տրտմութիւնը: Բայց վարդը վիշտի մէջ է
քանի որ վաղանցիկ է իր փթթած կեանքը: Ուստի կրականման այդ գեղանի
սիրուիկին իր սիրական պլպուլին առջեւ կը բանայ իր սիրատենց սիրտը եւ կը
հրաւիրէ զայն որ իրեն համբուրէ՝ վարդին՝ ու կշտանայ սիրով, որովհետեւ կու
զան կը քաղեն զինք. – կ'ըսէ ան, – ու պլպուլը այլեւս չի գտներ իր սիրուիկին:

Ահա այս է Երզնկացիի սիրավէպին նիւթը որ իրմէ 250 տարի վերջ պիտի
երգուէր նաեւ Ֆրանսացի եւ Իտալացի բանաստեղծներու կողմէ՝ սակայն
նուազ բնական ու ապրումով գրուած: Երզնկացիի կրօնաւոր ըլլալը իր
ներշնչումէն բան մը չ'է պակսեցներ:

Տեսնենք բնագիրը.

1. Այսօր եղեւ պայծառ գարուն,
ցընձան ծաղկունք եւ յորդորին
Հազնին ցեղք ի ցեղած՝
մանդրուն հաւերն ի հաւն խօսին.
Ի վերայ լերանց բարձանց

գոյնգոյն ծաղկունք փրոփն,
Ծածկեն զերեսս երկրի,
ըզլեռն ըզդաշտ ու զբաղչանին:

2. Են գեղեցիկ փետուր հատել՝
փոքրիկ հատերն Ի ծաղկոցնին,
Ու հազար դասըս դասով՝
քաղցրաձայնեն զանլըռելին.
Հարբել են յանուշ հոտոյն,
ու նրստել են ի վրայ ծաղկին,
Ի սիրու են ըստեղծած՝
սէր կայ յիրենք որ կու խօսին:

3. Բուրասանք է զարդարուած,
ու ցեղ ու ցեղ Հաւեր խօսին,
Ու ամեն հաւ սէր ունի,
ու շատ հասրաթ ի յիր սրբոսին,
Յանդադար քաղցրը ձայնեն՝
քունն է հատել ի գիշերին,
Որ ամեն հաւ յիր դիմաց
վասն իր սիրուն քաղցր խօսին:

Ահա ինչպիսի տաք շունչով կ'արտայայտէ թռչուններու զարմանային հրայրքը:
Ծաղիկները ներկած են իրենց երեսը: Թռչունները հարբած են ծաղիկներու
բոյրէն ու ամեն մէկը իր սէրը ունի:

Վարդը դեռ չէ բացուած: Մնացեալ ծաղիկները մանիշակի նախաձեռնութեամբ
կ'ուզեն զայն կտրել.

Որ ոչ գայ վարդըն կարմիր,
ու գեղեցիկ տերեւ փրոփն,
Ի նորայ պայծառ տեսուն՝
որդիք մարդկան ի մեզ չհային:

Գեղեցկուհիներու թագուհին՝ վարդը՝ մնացեալներուն նախանձը կը շարժէ քանի
որ բոլոր արու նայուածքները իրեն կը քաշէ: Դաւադրութիւնը կը

կազմակերպուի: Կը հաւաքուին նունուճարը, շուշանը, մասրենին, նարգիզն ու ձիւնձաղիկը եւ չարութեան ժողով մը կը գումարեն:

Ահա յանկարծ.

Յարկարծակի ելնէ կանչէ,
բլբուլ բարձր ի ծաղկընին,
Թէ գարթաւ վարդն Ի քընոյն,
ի մէջ կանանչ իր վըրանին.
Նայ լըսէ զձայն բլբուլին՝ վարդն
ու բանայ զգոտըն վըրանին.
Հանէ զկանանչ կապան՝
ու հագնի զիր խըրմըզին:

Ծաղիկները կը թառամին, կէտը տերեւաթափ կ'ըլլայ ու միւս կէտը փախուստ տալով բարձր լեռները կ'ելլեն: Իսկ ուրիշներ իրենց ամօթէն կը կապտին ու սուզի մէջ կը մտնեն, եւ կամ իրենց երկիւղէն կը դողան ու կը դեղնին: Իսկ վարդը՝

Նայ վարդըն գարդարեց
ըզբուրաստանքն ու զբաղչանին,
Ու շարեց տերեւ հագար՝
կարմիր նման նըռան հատին.
Նայ բլբուլն երեկ նըստաւ
ու հարբեցաւ յանուշ հոտին,
Ուս սէր գօրն ու գիշերն
ինքն անդադար ընդդէմ վարդին:

Թէ՛ սէր է ծառն ու սէր ծաղիկն,
ու սէր հաւուն ձայնն ի ծառին.
Սէր է վարդն ու սէր բլբուլն,
սիրով նստել ի վերայ վարդին.
Սիրով են գոյն ու գոյն
ու գեղեցի են ծաղկընին.
Վասըն սիրոյ փոքրիկ հաւերն
ի ծաղկընուն վերայ նըստին:

Նայ բլբուլն ուրախանայ

ու բազմի Ի վերայ վարդին
Թե հազար բարի գալուն
վարդին՝ ծաղկանց թագաւորին.
Նայ դառնայ վարդն Ի բլբուլն
ու պինդ փրօտ զիր տերեւին,
Թե ես այլ եմ սիրու տէրը,
ուսկայ սրբոսիս մէջն է դեղին

Թե չըկար սէր յիմ սրբոսիս
ու ես ունի անհոգութիւնն,
Նայ ես է՞ր ի կախ լինի
գօրն ու գիշերն ի մէջ փրշին.
Ես սիրով կամ կենդանի
’ի եմ զարդարել զիմ տերեւին.
Ու թէ սէրն յիսնէ գատի՝
նայ զիս տանի հողմ ու քամին:

Բլբուլ, մի դու զարմանալ
զպայծառ վարդիս գեղ Պատկերին,
Ձի ով որ սէր չունենայ՝
առ ինք չըկայ գեղեցկութիւն.
Ձուրքն սիրով յիս վերանայ՝
որ յարմատոյս առ իս քամին.
Ի ի լուսոյ արեգականն՝
ես ժողովեմ գեղեցկութիւնն:

Ի յիմ անուշ հոտոյս՝
Կենդանացան ով զհոտն առին.
Ի ի յիմ պայծառ տեսուս՝
ուրախացան ’ի ի խաղ Մըտին
Ձինչ որ յաշխարհի կայ
հոգս ու ցրնօր ու տրտմութիւն՝
Ի յիմ շնոճոր տեսուս՝
փարատեցան երբ զիս տեսին:

Յով որ սէր կայ յիր սրբոսին՝

նայ զիս նորայ կամակ տանին.
Որ քանի նայ յիս հայի՝
նայ հանդարտի սերն ի սրբտին:
Առնուն զիս եւ տանին՝
սիրով փրոեն Ի մըճխանին,
Ու ի յիմ պայծառ տեսուս
ուրախսանան՝ ի ըմբէն զգինին:

Ահա կամ ես զարդարած,
՝ իմ տերեւնիս զերդ հուր վատին.
Ու բացել եմ զիմ սրբտիս մէջն
ի դիմացրտ որ է դեղին.
Ար՛եկ զիս համբուրտ
ու կըշտացիր սիրովրտ հին.
Ահա զան եւ զիս քաղեն
՝ ի այլ ոչ գտնուս ի բաղչանին:

Միրոյ այս գովքը գրուած է 13-րդ դարու վերջերուն: Հակառակ անոր որ այլաբանական գործ մըն է, մեր հին բանաստեղծութեան անմասն, փարթամ փթթած ծաղիկն է գունագեղ յօրինուածքով մը: Խորագիրն էր «Բանքս վարդի օրինակաւ զՔրիստոս պատմէ», սակայն աշխարհիկ բանաստեղծութեան լատգոյն նմուշներէն մէկն է:

Բանաստեղծը երկրորդ քերթուած մըն ալ ունի որ նախորդին շարունակութիւնն է: «Մեկնութիւն վարդին համառօտ, վասն անգիտաց շինեցի զի կարծէին եթէ մարմնաւոր էր բանք վարդիս, ես վասն այն գրեցի»: Ինչ որ պատմեց նախորդին մէջ վարդին վրայ՝ գեղեցիկ ճարտարութեամբ մը նոյնը Քրիստոսի վրայ կը դարձնէ: Այս «մեկնութեան» մէջ ան կ'ըսէ թէ վարդը Յիսուս է, մանիշակը՝ Յուդան, պրպուլը՝ Քրիստոսի յարութեան փողը հնչեցնող Գաբրիել հրեշտակը, եւ այլն:

Միեւնոյն նիւթին կը պատկանին նեաւ երկու ուրիշ քերթուածներ: Անոնցմէ մէկը «Բան զարնան օրինակաւ խորհուրդ ի Քրիստոս, մի մարմին հասկանայք զբանս, այլ հոգեւոր» թէն նմանութիւններ ունի ԺԱ. քերթուածին հետ՝ բայց եւ այնպէս պակաս չեն գեղեցիկ եզական տողեր ու իմաստներ:

Հոս բնութիւնը ու տիեզերքը հարսանիքներով կը բերկրին. երբոր՝ գարուն կը բուրէ, երբիկոր բոշուններով, գետինը՝ ծաղիկներով կը ժպտի.

Երկիր էր լի մութն ու մըլար,
Սառն էր կապել եւ պաղ ու քար:
Հանց որ չըկար բոյս մի դալար,
Հիմի՝ ինք նոր է զարդարել:

Է հարսանիք տիեզերաց,
Է ցրնծութիւն տըտղաբերաց.
Գոյնզգոյնով ցեղք ի ցեղաց,
Ծաղկանք զերկիր են զարդարել:

Ծովըն դըդուրդ առնու սիրով,
Խաղան զեռունք յերկիր՝ ի ի ծով.
Ակունքս յորդոր գան պաղ Ու հով,
Եւ ի Քարէն յառաջ բըխել:

Ծաղկունքըն գան եւ ժողովին
Ի բուրաստանք՝ ի ի բաղչանին.
Մէկ մի մըտել ի մէջ ծովին,
Տեսն է դիշին՝ ի յերեր կացել:

Բլբուլն եհաս շաքարաբերան
Աւետաբեր մեծ յարութեան.
Վարդին եհար կանանչ վրան
Որ գայ բազմի զերդ հուր վառել:

Գայ վարդըն գաղտ ու անգուման
Ծածկել է զինք կանանչ կապան.
Չերդ որ ի յամբ մըտնու լուսին:

Բլբուլն լայ ողորմաբար,
Աղաղակէ քաղցրաբարբառ.
Ասէ թէ՛ ի՞նչ եղել պատճառ,
Վարդ, որ զերեսըտ չես բացել:

Վարդն ասէ. չէ դէռ ժամանակ
Ինձ բազմելոյ ի հրապարակ.
Յերկիր եկել չեմ համարձակ.
Վասն այն յայտնի չեմ ես կացել:

Վերջիվերջոյ դուրս կու գայ: Պայծառ վարդը տեսնողները կը գունաթափին ու կը փախչին: Իսկ գեղեցիկները գայն կը շրջապատեն եւ կը գովեն անոր գեղեցկութիւնը: Կուրախանայ պլպուլը եւ վարդի բուրմունքէն գինովցած հրաւր կը դրկէ ընկերներուն որոնք վարդը տեսնելով նուագի խնճոյք մը սարքեն: Վարդը հիմա առանց քաշուելու պլպուլին քով կը նստի որուն հետ կ'ունենայ խօսակցութիւն մը որուն ընթացքին վարդը կը պարզէ, թէ այս աշխարհին մէջ իրեն ինչ կը սպասէ - ըլլալ դեղ, վարդի ջուր եւ բանաստեղծն ալ իրեն դառնալով կ'ըսէ.

Կոստանդ, ի խոր ծածկեալ է բան
Չայս որ առ մեզ տըւեր նիշան.
Տուր գոհութիւն անլըռական
Այժմ որ կանաւ է խոնարհիլ:

Ե. Սիրոյ բանք

Մարմնի իրատունքը

Երզնկացի կրօնաւոր է բայց եւ այնպէս նոյն ստեղծ մարդ: Մենք կը զգանք թէ իր մէջ պայքար մըտ եղի կ'ունենայ: Կ'ուզէ հեռանալ մարդկային անձնասիրութիւններէն, կտրուիլ աշխարհէն, զսպելու համար ինքզինքը: Մակայն ոչ մէկ ձեռով կրնայ յաջողիլ:

Կոստանդին կը սիրէ մարմինն ու աշխարհը: Եւ ի վերջոյ բացայայտօրէն կը պարզէ մարմնին հանդէպ ունեցադ իր պաշտամունքը:

Հոգիս է խիստ յօժար
բանից իմաստնոց լեսել,
Մարմինս է հեշտասէր
զի աշխարհէս է ինք ծընել.
Ի յերկուքիս միջին՝
մոմ եմ ի մէջ հերոյն վառել
Անհիմն ու անհաստատ՝

Եմ անհանգիստ ի շուրջ եկել:

Ի չորս հակառակէս
ուսկամ յեւեռ եմ նայել
Ձի հուրն ի վեր քաշէ,
նայ հողըս ծանդըր է վայր հակել
Մակաւ մի ի ջրոյն՝
բոցըն հըրոյս է հանդարտել,
Քամին է յօգնութիւն
եւ բորբոքէ գիւորըս վառել:

Եւ այսպէս ան չի կրնար չսիրել աշխարհը, քանի որ «հեշտասէր մարմինը» «աշխարհէն ծնած է»: Բնութեան օրէնքն է որ կ'իշխէ: Բանաստեղծ է եւ աշխարհի կռակով կ'այրի իր կրօնաւորի սիրտը: Չի կրնար հաշտեցնել հոգիին ու մարմնին պահանջքները որուն արդիւնքը կ'ըլլայ իր խռոված հոգին: Ամեն շարժում սիրտը բաբախել կու տայ: Նոյնիսկ փչող քամին հոգւոյն կռակին բորբոքումը կը մեծցնէ:

Իսկ իր «եղբայրները» չեն հասկնար Երզնկացիի հոգեկան վիճակը ու անվերջ յարձակումի կ'ենթարկեն.

Ձի շատ կըսկիծ ու վեր
ի մարդկանէ է յիս հասել,
Իմ սիրտս է խոց գուգած՝
դառըն ցաւօք է զիս տանջել:

Ես եմ առանց սըլէի
ու մերկ եմ յանդիման կանգնել.
Հազար դէհաց խոցեն
ու չերեւի թէ եմ խոցել:

Նայ կէսք մ'ասին դայ է
յիմար ու խել մադաս կաթել.
Ու կէսք մ'ասեն թէ պարտ
է զայսպիսոյս արիւնն հեղել:

Ահա ուր հասած է ատելութիւնը այն յետադիմական ամբոխին որուն ղեկավարութիւնը արանձնած է առհասարակ եկեղեցականութիւնը: Եւ ահա նաեւ Երզնկացիի հոգեկան վիճակը: Ան վեր կը մնայ իր ժամանակակից կրօնաւորներէն իր հայեացքին լայնութեամբ ու ազատասիրութեամբ: Իր խառնուածքով անհնար կը համարէ չսիրել ու չերգել աշխարհի կեանքը, բնութիւնը ու մարդկայինը:

Սիրոյ բանք

Հիմա որ Երզնկացիի զգացումները անարգել հոսումով կ'աճին, պէտք չունեն այլեւս կրօնական իմաստով սիրոյ տաղեր երգել այլաբանութեան տակ ծածկուած: Հաւանաբար իր սիրոյ տաղերը հասուն տարիքին գրած է, որոնցմէ միայն երկուքը մեզի հասած են:

Այդ երկու Սիրոյ տաղերը մեծ նշանակութիւն մը ունին եւ եզակեանութիւն: Երբ կ'ըսենք Կոստանդին ապրած է դարու մը մէջ՝ որ սիրային քերթուած գրելը մեղք կը համարուէր, կը հիմնուիմք այն իրողութեան թէ ԺԵ դարը ոչ մէկ Սիրոյ տաղ չէր արտադրած:

Սակայն այդ երկու նորագիր քերթուածները՝ կու գան հալածուած ու թշուառ Կոստանդինը՝ յանդգնութեան պատկերի մը մէջ ներկայացնելու մեզի: Ան իր հոգւոյն ցաւերը ժողովրդեան կը յայտնէ միայն, այն ժողովուրդին՝ որ զինքը զնակատած է. եւ ժողովուրդին խնդրանքով՝ սկսած է ան «Սիրոյ» տաղեր երգել.

Եղբարք մի կան հետ մեզ սիրով.
Աշխարհի բան ուզեն գրբով.
Նայ եւ վասն այն յայտնի ձայնով՝
Սիրու բաներս ասցի յոլով:

Այդ «աշխարհ բան» ուզողները պէտք է եղած ըլլան աշխարհական «եղբայրներ»: Չնայելով որ ան «յայտնի ձայնով» այսինքն առանց այլաբանութեան յօրինած է սիրոյ երգը, սակայն ոչ կատարեալ վատահութեամբ կ'ընէ մամնի գովեստը: Իբրեւ խղճամիտ եկեղեցական վերջին տունին մէջ ինքզինք կը խրատէ ըսելով.

Դարձիր յունայն սուտ բաներուտ,
Զի է անշահ եւ անօգուտ.

Խելօք իմաստութիւնը մոտ,
Ձի քեզ բաժին իրք մ'այլ անկաւ:

Կը թուի թէ առաջին այս քերթուածը Կոստանդին Երզնկացիի նախափորձն է Սիրոյ տաղ Գրելու, ապա թէ ոչ՝ հարկ պիտի չըլլար սապէս վերջաբան մը ընել, «ոմանք խնդրեցին ինձմէ որ սիրոյ երգ գրեմ»:

Երկրորդ տաղին մէջ, սակայն, ան արդէն իբրեւ սկզբունք կը դնէ, թէ կին սիրողն է «ճշմարտութիւն անմահութիւն գտնում»:

Տաղ սիրոյ ազնիւ

1. Այ սուրաթ, պայծառ ու պատկեր լուսատես՝
Չիմ աչերս ի քո սիրոս յէ՞ր կու գատիս.
Դու գարնան քամի, ես ծաղիկ ծարսուած.
Իմ ծարս սրբոսիս համար հողմը հրնչեց:
2. Ի յերկիր ինչ կայ նրման ճեզ օրինակ,
Դու ի յերկնից լուսեղենքն ես նրմանակ.
Քու տեսովդ ես դու լուսին պատրի թամամ,
Որ իմ սրբոսիս խաւարեալ լուես կու ծագես:
3. Դու սուրբան ես, պէհրասպ շատ ծառանով,
Զծառայիս ձայնըն գիտեմ որ կու կանչես.
Դու քանի՞ հեռաձեալ ես այս քո քերոս,
Արտասուքն ի վայր թափես ի յաչերոս:
4. Թէ լինէր որ գրեզ տեսնի առ իս գալով,
Եւ խընդութեամբ ի դեմ գայի քեզ սիրով.
Ի յերկրի երես գրնի քեզ կոխելով,
Ու գհոգիս անդ հանէի յօժար կամով:
5. Ասեմ՝ Եղուկըդ տար սիրով ջերմային
Երբոր դուն յորդորելով մանրաքայլես՝
Ասեմ արեւ ծագեցաւ ի մէջ գիշերիս.
Երբ քայլես յանկարծակի յերկիրին երես:

6. Ով ընկեր ի քո սիրուդ բանտ ի զընտան՝
Հաշեշէք եւ անմահութեանդ է նա տես.
Ով որ ունի ի քո սիրտս իրք մի նըշան,
Կենդանի մարդ հոգետր դու զնայ գիտես:
7. Ով չունի սիրելի սիրով հետ քեզ վառ,
Դու անբան եւ անասուն ըզնա կոչես.
Դու յաճապ քաղցր ու լատիֆ եւ խօսելով՝
Որ շաքար ի քո շրթանցըդ կո ծախես:
8. Բուրաստանք ծաղկոդ Ի լի տես թէ վառես.
Որ ի յիս անմահութեան հոտ կու բուրես.
Դու ծաղկանց եւ թագաւոր վրդի գունով,
Չիս ի քո դիմացդ ի փուշն յէ՞ր կու դատես:
9. Դու հուճքով փատիշահ եւ քու խասիրով,
Եասիր կամ քո ծառայ զինքն ազատես.
Ես ազատ եղեալ եմ այսօր երկրի վրայ,
Թէ ծառայ սրբտի կամով զիս տեսանես:
10. Այլ չըկայ քեզ Կոստանդին, կեանք մուրատով,
Երբ ի յիր քաղցըր տեսուն հանց կարօտ ես.
Է՛ սուրաթ պայծառ ու պատկեր լուսատես,
Չիմ աչերս ի քո սիրտս յէ՞ր կու գատես:

Սէր ունեցողն է «կենդանի հոգետր մարը», կ'ըսէ ան. իսկ առանց սէրի մարդուն ան, կնոջ բերանով «անբան եւ անասուն» կ'անուանէ: Բանաստեղծը արդէն իսկ վերոյիշեալ տաղին մէջ համարձակ է, այլեւս չ'Ի գոչար իր «աշխարհի բանք» ի համար, այլ, ընդհակառակը, կը գրէ թէ առանց իր սիրած էակին չկայ իրեն համար «կեանք մուրատով»:

Կոստանդին Երզնկացիի երկու սիրոյ տաղերը մեր այս տեսակի ամենաիին բանաստեղծութիւններն են, որ մինչեւ հիմա երեսան եւս են: Մարմինը, մարմնի գեղեցկութիւնը չէ որ միայն կը գովուի անոնց մէջ, այլ

կ'արտայայտուի նաև սիրահար երգիչին հոգեկան վիճակը: Տաղեր շինծու չեն, այլ սիրաբուխ, Կոստանդինեն բխած: Շատ պարզօրեն կը զգացուի որ այդ կրօնաւորը կ'երգէ անկեղծութեամբ իր սեփական ապրումները: Ինչպէս գուսանական երգերուն հոս եւս կարելու տեղ կը բռնէ սիրուիին մարմինը: Երգնկացի եւս յափշտակուած է կանացի գեղեցկութեամբ, կնոջ «պայծառ ու լաւատես պատկերով»: «Մորճ ու շիտակ հասակով»: Ան եւս սիրավառ գովքի կ'արժանացնէ կնոջ՝ լուսանման բոլոր դէմքը, սեւ մազերը, «շուրջ երեսին մազերն ոլոր», շրթունքները «ական ու արեգակ» ակռաները, կարմիր երեսը, նոյնիսկ գոյնզգոյն հագուստը, մարն քայլուածքը: Ասկայն այս բոլոր քրիստոնէայ վանականի մը ամօթխածութեամբ: Երգնկատիի տաղերը չունին Քուչակի «մեջլիսներու» փորձութիւններուն նկարագրութիւնը: Չկան ծոց-ծոց հեշտանգինկ վայելքներ, գիշերային հաւոցնող Սպասումներ, բաժանումի հեծկտուրներ: Երբ Քուչակին մօտ բանձր «յայրո՛ւ ու պազշոտ» երեսով արեւելքի զգայական քէյֆերուն ֆիզիքական հեշտասիրութեան մը տարրերը գլխաւոր տեղը կը բռնեն Երգնկացիի մօտ աւելի հոգեկան ապրումն է որ կը ջատագովուի: Երբ Քուչակ սերը հեթանոս գեղեցկութեամբ կ'երգէ, Երգնկատի քրիստոնէայ խոնարհ միաբանի մը այրած սրտով կը թոթովէ: Մինչ Քուչակ էգին ծոցը փնտռող մարմնական հրայրք մը ունի Երգնկացի իր սիրուիին ծառան է:

Երգնկացի շատ ազդուած է միստիկական բանաստեղծութենէն: Ազդուած է Նարեկացիէն իրենց երգած նիւթերու էութեան նմանութեան հետեւանքով. մեկուն համար հզօր սէր դէպի աստուած, միւսին համար նոյնպիսի սէր մը դէպի իր տենչալին:

Կոստանդինի քնարը կ'երգէ ոչ միայն կենդանի մարդու բարդ ապրումները, այլ եւ «բնութեան մէջ մարմնացած» զգացմունքները: Բանաստեղծին մօտ բնութիւնը ինքնին սէրն է.

Թէ սէր է ծառն ու սէր ծաղիկն,
Ու սէր հաւուն ձայնն ի ծառին,
Սէր է վարդն ու սէր պլպուլն,
Միրով են գոյն ու գոյն
Ու գիղեցին այն ծաղկընին.
Վասն սիրոյ փոքրիկ հաւերն
Ի ծաղկընուն վերայ նստին...

Մերը որ գոյութիւն ունէր մարդու առաջին շունջին մէջ իսկ մարդ էակին ամենապայծառ, ամենանուրբ, ամենագեղեցիկ զգացումներէն մէկն է: Մերը, կեանքի, աշխարհի, բանականութիւն ունեցող մարդու կարօտն է. կարօտը բնութեան, կարօտը հայրենիքի, հողի ու ջուրի, բոլոր գեղեցիկ զգացումներու խտացումը, որուն իսկական մարդը պէտք է երկրպագէ...: Սիրոյ հակադրութիւնը է մահը: Երբ դադրինք սիրելէ, այդ կը նշանակէ թէ մեր զգացումները դադրած են գործունեայ ըլլալէ եւ ուրեմն մարմինը բաժնուած է իր մղիչ ուժէն:

Ես սիրով կամ կենդանի
՝ ու եմ զարդարել զիմ տերեւնիմ,
Ու թէ սէրն յիսնէ զատի՝
նայ զիս տանի հողմն ու քամին:

Երզնկացի շատ անգամ կը դառնայ սիրոյ հիւանդ երգիչ մը: ԺԳ դարու Տերեւն մը աշունը փնտռող, որուն բացի սիրուհիէն ոչ մէկ թծիշկ կրնայ բուժել՝

«Զո սիրուդ հիւանդ եմ ես, հեքիմ ու ճարահ դու ես...»:

Կոստանդին կնոջ վրայ պարզ իբր հաճոյքի առարկայ չ'ընդունիր, այլ՝ կեանքի հաւատարիմ ու գաղափարակից ընկեր մը: Անոր քով կինը շատ բարձր տեղ մը ունի եւ ինք. «ձիր դէմ կ'ելլէ սագով եւ թէ ծառայ կամով...»:

Մերը պէտք է փոխադարձ ըլլայ: Ան փոխադարձ յարգանքի եւ միատեսակ անբիծ զգացումներու ամենաջերմ արտայայտութեան առկայութիւնն է, մարդկայնականութեան յաւերժական գաղափարներու նիւթականացումը:

Մակայն այս բոլորէն ըտք Երզնկատի կծու կերպով կը խօսի «շնացող» կիներու եւ մարդոց մասին որոնք սերը կը հաւասարեցնեն ու կը շփոթեն ցոփութեան եւ բշտախոհութեան հետ: Համերաշի ընտանիքը մարդկային ոգիին անդորրութեան հանգրուանն է, ուստի եթէ կը բացակայի այդ երանաւէտութիւնը, ապա այդպիսի ընտանիք մը կը կորսնցնէ իր բարձր առաքիներութիւնը, պարկեշտութիւնն ու հմայքը:

Թէ լինի մարդ նենգաւոր, լիրբ, չար ու շուն,
Ե թէ այր է ու կամ կին՝ լեզուովն ասուն,
Չերդ օձի թիւնքն է դեղուկ դուռն ի մահուն,
Անհանգիստ եւ դեղեխանք տանն ընդանուն:

Անըզգամ կին է գազան մէջ աշխարհի,
Ընդանի եւ յերեւան մարդկան լինի.
Լաւ ի լեռն բրնակիլ յանապատի՝
Քան ի մէկ տուն ընդ կրնոջ լըռքախօսի:

Ընդ կնոջ անըզգամի շատ մի խօսիս,
Թէ չէ՛ թեզ ըզթեզ գուգէ իր նըմանիս,
Հանց որ շոյտ ի լիբբ կացուցրն հաւանիս,
Բայց յետեւ յիբմէն ցաւօք դուն խոցուիս:

Մի իսկի հաւատալ բան երդման,
Չի չունի գործ մի յայտնի կամ յերեւան,
Թէ հազար մարդ տեսանէ յօր ի լըման
Ամենուն գործ երեսօք ցուցէ ու բան:

Այն մարդն այլ՝ որ ի օտար կին շողախի,
Յինք ի մօտ բոգութեան գործըն աւելի,
Յերակ է միտքն ի շընալ գաղտ՝ ալանի՝
Չով տեսնու ի յօտարաց կամ սիրելի:

Մի կենալ լեզուանի կրնկան հակառակ,
Որ չասէ ընդ քո երեսքո բանք առակ,
Եւ գուգէ շատ խօսերով իր նմանակ՝
Եւ բերէ թեզ մեծ ամօթ ի հրապարակ:

Ըս տիր քնարին հնչիւններուն թէ սիրուիին, թէ ընկերները ու բոլոր
բարեկամները այս «չար ու շուն» մարդոց ճամբան կը բռնեն եւ անսահման վիշտ
կը պատճառեն անոր: Ան կը մնայ մինակ առանց «եարի», առանց ընկերի եւ
բարեկամի եւ կ'իյնայ ցնորքներու աշխարհը:

Երզնկատի դժբախտ բանաստեղծ մը է: Ան անկեղծօրէն կը սիրէ, բայց
դաւաճան սիրուիին դրժած է իր խոստումը, ունի անսահման ազնուութիւն,
մարդասիրութիւն, բայց ոչ ոք կայ զինք հասկացող: Ահա թէ ինչու
Երզնկացիին կը դառնայ մերժուած սիրոյ անհուն վիշտի, լքման, յուսահատ
կեանքի բանաստեղծը:

V. ԻՄԱՍՏԱԿԱՆ ԱՍՔԵՐ

Իր վանական ու մանաւանդ հալածուած ըլլալը պատճառ դարձած են Երզնկատիի իմաստական ասքերուն յօրինումին: Նախանձորդներուն ու չարկամներուն դէմ իր գէնքն է բարոյական խրատը, իմաստալից ասացուածքները, որոնք բխած ըլլալով իր իսկ վիճակէն, են շատ զգայուն, թրթռուն ու եռանդուն: Յաճախ քերթուած մը ամբողջ շարքն է իրարյաջորդ իմաստա-խրատական ու քնարական տուներու: Ասոնք գրուած են «չար ընկերներու» դէմ:

«Նորին Կոստանդեայ բանք» քերթուածը որ ունի իմաստասիրական բովանդակութիւն մը, իմաստութեան վրայ ներբող մը է: Իմաստութիւնը անմահութեան պըտող էր կոչէ, եւ ով որ անոր հաշակը կ'առնէ, այլ ես չի հաւնիր աշխարհիս անցաւոր իրերը:

Իմաստութիւն ձեզ ցուցանէ յով որ հոգոյ աչք կայ ի բաց:
Չինչ մարգարիտ շարեալ յոսկի հանց գեղեցիկ բանն է մտաց:
Ով գիտութիւն ունի անբաւ ի մարդկանք ինքն է գոված.
Քանի հասնիս ի մեծութեան խոնարհ կացիր մարդկան ու ցած:

«Բան յաղագս չար ընկերաց եւ պատրաստ կալ մոլորեցուցիչ ոմանց որք հակառակին բարութեան» խորագիր մըն է իմաստական ասքի մը որուն մէջ բանաստեղծը կը յորդորէ չհաւատալ ամէն մարդու որոնք ինքզինքնին քեզի բարեկամ ցոյց կու տան.

Դու յառաքջ փորձէ ու տես եւ լսէ ի սրտէ խապար.
Չի ոմանք ցուցնեն զիրենք քաղցր ու անուշ գերդ ըզշաքար.
Բայց մահու դեղ կայ առ ինք ծածուկ պահած ու վնասակար:

Իրարու կը հակադրէ եղբայրութիւնն ու ատելութեամբ նախանձը, չարն ու բարին: Կու տայ չարին ծնունդ:

Ով է գայլ՝ նա գառն եղել, յաչըս մարդկան ինքքն տխմար, նա շրջի հետ գառներուն յափշտակէ հետ գիշտաբար:

Քանաստեղծին վրդովմունքը այնքան կը շատնայ որ իր պաղարիւնութիւնը չկարենալով պահել իմաստական բանքը հետզհետէ կը փոխուի դառն ողբի ու երգիծանքի:

Տեսնուն զոմն իմաստուն
յայս աշխարհիս ու մարդ արդար,
Յիմար կոչեն նորա
եւ ի խելացն ասեն տըկար.
Թէ մէկ մի զանձն Ի մահ
եղել ու գնայ ի ծովն ի վայր՝
Չօհար բերէ Ի դուրս,
նա անպիտան կոչեն զնա քար.

Նախորդ քերթուածին նման անձնական ու միաժամանակ խրատական-իմաստական քերթուած է եօթներորդ տաղը, որուն խորագիրն է «Յաղագս անգիտաց սուտ խօսելոյ զբանս, անպիտան եւ հակառակ կալ իմաստնոյ»:

Կծու հարուածներով կը խարազանէ զինք հալածողները, որոնք անհոգի կենդանիներ են, չեն գիտեր խելացի խօսք մը ըսել, ասելով կ'ատեն իմաստուն մարդուն.

Միշտ առաքինիները պիղծ ու անսուրբ մարդոց թշնամիներ կ'ըլլան: Աղէկին ատողը խատն է եւ եթէ երբեք իմաստունը անոյշ լեզուով տգէտին խօսի ան շուտով կը փախչի:

Իմաստունը կը ջանան յաղթահարել միայն բամբասանքով: «Խաւարին գործն՝ ի խաւառն է հաստատել ծածուկ կալով». երբ ան լոյսին կը յայտնուի կը վախնայ «յայտնել զինք բանալով, եւ անգէտ խօսին ի յանգէտ մարդիքն ի մօտ է շիմաթով»: Ով որ անտեղի բան կը խօսի արդարին եւ կատակելով, Աստուծոյ դէմ մեղանչած կ'ըլլայ եւ շուտով կը կործանի:

Իմաստունն է առաւօտ,
աւետաւոր է զընծալով.
Իսկ անմիտն է խաւարի
կայ թանձրացել յերալ քընով.

Իմաստունը՝ արեգակի պէս է պայծառ ու լեցուն լոյսով, իսկ ամիսը խաւարին
տուն ու տեղն է եւ լեցուն ցաւով:

Իմաստունը՝ բուրաստաններ է գոյնզգոյն ծաղիկով լեցուած, իսկ ամիսին
սիրտը մութ ու մռայլ սառնամանիք կը տիրէ:

Իմաստունն պտուղ բարի՝
անմահութեան ճաշակ տալով,
Իսկ անմիտ է անպրտուղ
դատարկացեալ եւ լի փրշով:

Իմաստունն է յաշխարհէս
ինք յագեցել անարգելով,
Իսկ անմիտն է ցանկութեամբ
զինք բոբբոբել սրբտի սիրով:
Իմաստնոյն միտքն առատ
խիստ լիութեամբ կուշտ եւ ուժեղ,
Ի անմիտն է քաղց ու ծարաւ,
ակն է ազահ եւ լի սովով:

Իմաստունն է ճանապարհ
ճըշմարտութեան ինք գընալով
Իսկ անմիտն է կոյր մըտօք՝
ի խորխորատ անգել՝ ի ծով.
Իմաստունն ոչ երկընչի
թէ հարկանեն զինքն սիրով,
Քայց յանգէտ մարդու խօսից
խոցի հոգով ու մարմնով:

Քովանդակ աշխարհս է գայլ,
եւ միաբան կան մի ժողով.
Նայ գառին ո՞ր կայ հանգիստ
մէջ գանձան ինք կենալով.
Ով խելօք է եւ ուզէ
զինք կենդանի սրտի կամով՝
Քող լինի ի յաշխարհէս
ինք անձանօք հրաժարելով:

Ով փառօր ինքն երեւի
յաչքս մարդկան մեծ պատուով,
եւ սիրէ փարթամութիւն
եւ ընդունի զինք զովելով.
Երբ լքսէ նախատանաց
բանք յօտարաց վասն իր տալով՝
Նայ խոցի հանց մահուան
որ չբըժըշկի այլ նայ դեղով:

Իսկ որ սուրբէ, անարատ,
եւ յերեսաց չէ ինք գործով՝
Թէ զովեն զինք՝ ոչ խընդայ
կան բանբասելով.
Թէ աղքատ ի հանդիպի
կան թագաւոր ոսկի թաճով՝
Հաւասար մէ տեսանէ
նըման միմիանց ոչ զատելով:

Ոչ անգէտներուն կը յորդորէ առնուագն իմաստուններուն խօսքը մտիկ ընել
որպէսզի ամէն անգամ մերկ, դատարկ ու ամօթով չերեւին:

Գառնալով իրեն բանաստեղծը կ'ըսէ.
Կոստանդին է՞ր կաս ազար
'ի ի սիրտ ելնես թեզ մ'ըշտապով.
Վասն անգէտ'ի անմիտ ոմանց՝
զքեզ է՞ր տանջես շատ ցընորով,
Ոչ կարես հաւան պահել
դու զամէն մարդ հետ քեզ սիրով:

Թէ կամիս հանգիստ կենուլ
որ չըմաշես դու զքեզ հոգով՝
Մի փառաց դո հետեւիլ,
մի անգանիլ անեզր ի ծով,
Չի ծովուն ոչ կայ հանգիստ
յերաց ծրփի յալիս քամով:

Ի ով հողոյն բաժին լինի՝
այլ չհաստատի ինք կենալով:

Նման անձնական եղանակով յօրինուած է իններորդ քերթուածը որուն
զկզբնատրութիւնը խորագիրով միասին կը պակսի: Բովանդակութիւնը
լեզուագէտներու եւ աշխարհասէրներու համար խրատ մըն է, սակայն
իմաստասիրական ու խոր կտորներ անպակաս են:

Առանց մեկնաբանութեան պիտի ներկայացնեմ այս շատ գեղեցիկ քերթուածը
որ իր մէջ քիչ իմաստական տարրեր կը պարունակէ.

Այլոց այնչափ բացցիր որչափ քեզ եւ բերըն դրբել.
Թէ չէ ըզհողդ հոգի ընդդէմ մարդկան եւ ցուցուցել:

Թէ դու կամիս լեզուով գեղեցկաշէն պարիսպ ածել,
Նայ շոյտ հողմակոծի, զի յինք չըկայ գործ կատարել.
Թէ փուտ փայտէ մառով վերայ ծովու եւ գնացել՝
Առանց մաւալարի՝ ՚ւ առանց թելի, ո՞նց եւ կացել:

Թէ դու ասես թէ եմ եւ ջօհարի՝ որ այլ չէ լել.
Նայ քեզ լաւ չըպիտի ոչ սուրաթով զքեզ ցուցանել.
Ասես, թէ քան ունիմ՝ ի քարէն ջօհար ուզես հանել,
Չունիս գործ երկաթի ընձեռներս խոց կամիս գուզել:

Աղբիւր կոչիս առատ որ շատ ծարաւ եւ արբուցել.
Դու է՞ր ծարաւ շրջիս վերայ երկրի՝ խիստ կարօտել.
Շատոց խըրատ կու տաս քեզ հաւատան ու եմ լըսել.
Եւ ի քո դիմաց փակել եւ դու զականջդ ու պինդ խըցել:

Թէ կամիս դու զարդարել գեղեցկապէս զհողդ նեղել,
Նայ զգոգիդ յաիտեան անյիշելի եւ մոռացել.
Չարդիւք պատմուհանաց դու երեսիս փառօք պատուել.
Որ նորն է՝ հին լինի հինն է բազում արուրց անցել:

Քո սիրտ Ի յաշխարհիս Ի հասրութէն է հուր վառել,
Քանի որ շատ սիրես՝ նայ շատ դրոներ է քեզ բացել.
Մարմինտ է ցանգութեամբ Ի յաշխարհիս սէրըն մաշել.

Քանի որ շատ վայելս յետև կարօտ ես մընացել:

Մարմինտ որ էր տեղայ՝ նման ծաղկի գեղեցկացել.
Իսկ այժմ ահա հասեր՝ Ի երիտասարդ ես կատարել.
Հիմի գայ ծերութիւնն որ ինք ըզմահն էր գուշակել.
Ոչ փառք այլ երեւի, եւ ոչ պատկեր գեղով լըցել:

Ահայ կամիս գարթիլ դու որ ի քունդ ես պանծացել
Եւ ի քո փարթամ կենալդ մերկ ի յամօք ես մօտեցել,
Չարդիր եւ գիտացիր որ մեզ գարուն կամի յայտել.
Եւ Տէր գայ պահանջող զինչ որ ի մեզ են սերմանել:

Ոմանք փրտեն տերեւ գոյնգոյնով գեղեցկացել.
Ոմանք չոր՝ Ի անպիտան են մահաբեր փուշ բուսածել.
Ոմանք արեգական պէս շառաւեղ են յարձակել.
Ոմանք խաւարային անդրնդատոյզ են նուազել:

Ոմանք սըրաթըռիչ թեօք՝ յերկինս են վերացել.
Ոմանք չար կապանօք՝ ըզհետ դիւաց կամին տանջել.
Ոմանք ընդ Քրիստոսի յաջակողմեան դասին բազմել.
Ոմանք չեն արժանի ի յիր տեսոյն կան հալածել:

Ոմանց քաղցրը ձայնէ՝ եկայք առ իս ով աշխատել.
Ոմանց դառնայ սաստէ եւ հըրաման տայ չարչարել.
Այդ քո ճարտար լեզուդ անդ ոչ կամի պատասխանել.
Կամ գեղեցիկ սուրաթ ու կամ գարդով կամիս խաբել:

Որով չափով չափես՝ նոյնովըն քեզ կամին չափել.
Որով զիք դատիս նոյն դատաստանն կամիս կըրել.
Յիմար, զամօք մարդոյն յան զԱստուծոյն մեծ ես տեսել,
Ի ի յահեղ ատենէն չկամիս դողալ ու սարսափել:

Լեզուն նըման հըրոյ բազում անտառք է հերդեհել.
Դու լեր խալաս ոսկի, որ շատ հետեր ի հուր մըտել.
Լեզուն հողմըն սաստիկ, որ շատ խըռիւ է տարտարել.
Դու լեռ ծառ պըտղաբեր ի մէջ երկրի արմատացել:

Լեզուն է հեղեղատ, շատոց հիմունս է կործանել,
Դու լեր վե՛ն հաստատուն, գլխոյս անգեան հիմըն շինել,
Լեզուն է յորդ քամի, ծովուն խրոփութիւն բերել,
Ի գառ կաց ի նմանէ՛ յատակ ծովուն շօհար պահել:

Գարձիք դու խոնարհեց, ու մի գԱստուած փառաց փոխել,
Ու հող Կացիր մարդկան՝ զհրպարտութիւնըն մի սիրել,
Ով քեզ յիմար կոչէ՛ ասայ, աղէկ զիտես ճանչել
Որ լինես իմաստուն եւ հանճարել մարդ կատարել:

Ով քեզ չար կամենայ՝ պարտ է բարի հատուցանել,
Ով փուշ է ի բի դիմաց՝ դու յիր միջին լեր վարդ վառիլ,
Դու ջանք դիր գատելիս եւ զքըջնամիսըն քո սիրել,
Թէ չէ՛ այն փոխարէն է սիրոյն սէր հատուցանել:

Գեղեցիկ խրատական-իմաստական քերթուած մըն է նաեւ «Յաղագս եղբայրութեան բարոյ եւ չարի» խորագիր կողո քերթուածը: Իմաստութեան գովեստը տրուած է ճոխ պատկերներով:

VI. ԱՆՉՆԱԿԱՆ ՎԻՇՏԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Իրաւ ներշնջման այս աշխարհիկ երգերը որ բնութիւնը կը մարմնաւորէին լոյսով ու սէրով, վարդով ու պլպույով անհաճոյ կ'երեւէին Երզնկացիի վանական եղբայրներուն որոնք թէւ Շահնաման հաճոյքով մտիկ կ'ընէին բայց կը քրթմնջէին, թէ Կոստանդինը մարմնաւոր բաներ կը յօրինէր: Բանաստեղծը շատ կը տառապի իրեն նախանձող «սուտ եղբայրներէն» որոնք չարախօսութեամբ զինք կը բամբասեն: Ան թէւ կարեւորութիւն չ'ընծայեր այդ «անգէտ» «անմիտ»ներուն, սակայն դիրազգաց ըլլալով՝ հոգրով շատ կը վրդովի եւ իր երկերով անոնց իրաւ արժէքը ցոյց կու տայ: Այդ առիթով ան իմաստական ասքեր եւ անձնական քնարերգութիւններ կը յօրինէ վշտահար գեղումներով իր խոցուած սրտէն: Այս խոցուած սրտին արտայայտութիւնն է նոր քնարերգութիւնը - անձնական բանաստեղծութիւն, ուր բանաստեղծը իր անձնական զգացումները կ'արտայայտէ: Կոստանդին աւելի կ'արժէքաւորուի

անով որ իր անձնական տաղերը կը բխին այն պատճառէն որ ան կը սիրէ կեանքը, բնութիւնը, լոյսն ու գարունը:

Երբ Կոստանդին «յայտնի ձայնով» կը սկսի երգել աւելի սաստիկ հալածանքներու կ'ենթարկուի եւ իր գործով ու գաղափարներով մինակ կը մնայ իր շրջանին կեղծատր մարդոց մէջ որոնք զինք խելագար կ'անուանեն:

«Բանք խօսիլ Ի ժամ տրտմութեան, գոր գրեցի առ պահ...ս սուտ եղբարց, գոր վիրաւորեցայ: Երգնկացի խոցուած է.

Ձերք ի ծով կամ տատանել
յերակ ծրփեմ յալիս խաւատ,
Եւ շրկայ եզր ի ծովիս`
կամ թէ ճարուս թէզ կայ վըճար:

Մարդոց համար այդ սովորական է: Կեանքը արցունքի ու խնդուքի տօնակատարութեանն է: Շատ յաճախ տրտմութիւնն է որ կը տիրապետէ: Բայց Կոստանդին վիրաւորուած է իր իսկ մերձաւորներէն.

Ոչ ունիմ մարդ սիրելի ի յընտանեաց ինձ կամ օտար,
Որ գըթայ սըրտովն ի յիս` կամ աղետայ զիս իր եղբայր.

Է` գերի սիրտ` լի արեամբ, քանի՞ կենաս հըրովտ ի վառ.
Կամ վանց այս սուտ կենցաղոյս քանի՞ կեանս դու թըւաքար,
Թէզ զարթիր դու ի քընոյտ. հանց ի յերագտ է՞ր յուսացար.
Եւ թափէ զարբեցութիւնդ եւ տար զհոգւոյս կամքն ի կատար:

Այս խոր վերքն է որ տուած է հայ գրականութեան գանձերէն մէկը: Որքան վիշտի խորութիւն ու շեշտի անկեղծութիւն որ մարդս կը գերէ: Որքան շոգիացող արցունք որ կը քարանայ:

Իբր մխիթարանք բանաստեղծը իր մտածումները ունի: Կը յորդորէ իր խրատը միկ ընել. «Պէտք չէ հոգով մաշիլ անցաւոր կեանքին համար».

Ձի շատ որ հաւանեցան
այս կեցաղոյս `ու առին դադար,
Բայց շուտով յատակ ծովու`
ի խորս անգան որպէս կապար:

Կոստանդինի մէջ յուզումի ալիքները յանկարծակի են: Դիւրագգած կազմուածքը պատճառ կ'ըլլայ որ ուրախութիւնը՝ բնութեան փթթումէն աճող՝ շուտով փոխուի արցունքի ու տրտմութեան: Բանաստեղծը իր մարմնին տխրութիւնը արտայայտող բոլոր մասերը գործի լծէ ու գանգատի, միշտ գանգատի: Խնդումներէ հարբած հոգին յանկարծ արցունքներ կըթէ. «խեւ» կը դառնայ վշտերէն հալածուած որոնք նախանձորդներու չար սրտերէն կը բխէին:

Ֆրիիսթ կանչեմ հազար 'ի ահեղ հառաչ բերեմ լալով,
Ի յանգէտ մարդկան ձեւաց զհոգիս երեմ անշէջ հըրով.
Եմ յիմար դարձել ու խեւ ու սաւղայի ի շուրջ գալով,
Վասըն էշ ու անյիմայ ոմանց՝ հանեմ զհոգիս շուտով:

Ութերորդ քերթուածը ես անձնական բողոք մըն է իր նախանձորդներուն դէմ, եկար ու պատմական խորագրով մը. «Ոմանք չարախօսեն զինէն վասն նախանձու, թէ ո՞րպէս խօսի սա աշայիսի բան, զի վարդապետի չէ աշակերտել. զի այլ է աշխատիլն եւ այլ է շնորհքն Ի հոգւոյն, զոր ես պատմեմ ձեզ, յաղագս տեսլեան իմոյ, զոր տեսն գարմանալի տեսիլ, մինչ Ի վանք կայի հնգետասան ամաց, զոր տեսի այր մի արեգակնազգեստ եւ լի լուսով:

Ես եմ մէջ աշխարհիս զերդ ըզյիմար ի յանդիշայ.
Ոմանց թըլիմ խելօք, ոմանց խիստ խեւ ու անյիմայ.
Ոմանք չար ին հետ ինձ, կրճեն ատման ի յիմ վերայ,
Ի ոմանց պատեհ թըլի՝ զարիւնս հեղուլ իր կամ լինայ...

VII. ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ԵՐՉՆԿԱՑԻՒ ՄՕՏ

Կոստանդին Երզնկատի իր ժամանակի հայրենասէր երգիչներէն է: Ան «յայտնի» կամ ոչ-յայտնի ձայնով կը յարձակի անձնասէր Իշխաններուն վրայ որոնք դէմ չդնելով հանդերձ քաթարական արշաւանքներուն զիրար կը ջարդեն անձնական փառքի տիրանալու համար: Հայրենիքը պաշտպանելու համար ժողովուրդին բոլոր խաւերը պէտք է միանան եւ առաջնորդուին խելացի եւ կարող ղեկավարի մը կողմէ: Այն ժամանակ է որ անպարտելի կը դառնայ պաշտպանողականը եւ անոր բախելով կը քանդուին գուրոթիմները: Սակայն չկա՛վ այդ խելացի առաջնորդը եւ բանաստեղծը տխուր է որովհետեւ.

Հովի չունինք տեսող

ու մենք ենք մոլորեալ ոչխար,
Շատ գայլք են յարձակել,
ի վերայ մեր խիստ անհամար,
Ի մէջ ծովուս ծրփինք,
ոչ նաւ ունինք, ոչ նաւավար...

Այս տեղերէն կը տեսնուի թէ Երզնկացին արժանաւոր յաջորդն է Մովսէս Խորենացիի, Եղիշէի եւ Այգեկցիի որոնք իրենց կարգին խիստ քննադատութեան ենթարկած էին այդ տիրող թոյլ դասակարգը:

VIII. ԸՆԿԵՐԱՅԻՆ ՔՆԱՐԵՐԳՈՒՆ

Կարգ մը քննադատներու կողմէ Երզնկացին նկատուած է ինքնամփոփ քնարերգու մը, որուն երգերը չեն ներկայացներ իր դարաշրջանը, եւ որ կապակցութիւն չունի աշխատաւոր ժողովուրդի լաւագոյն ձգտումներուն հետ: Երզնկացիի քերթուածները կարդալով մենք կու գանք տարբեր եզրակացութեան:

Եթէ Կոստանդին Երզնկացիի բանաստեղծութիւնը չունի ընկերային բողոք, եթէ ան անսահման բայց ոչ ցայտուն գայրոյթով չ'Ի խօսիլ Իշխող դասակարգերուն դէմ, ապա ինչո՞վ կարելի է բացատրել այն անհամար հալածանքները՝ տգէտ կրօնաւորներու եւ աստապետներու կողմէ որոնցմէ ծնունդ պիտի առնէին Երզնկացիի փրփոռ զգացումները եւ համայքը՝ իր յորդարատ շունչին:

Իրողութիւն է որ այդ բողիքը եւ ցասումը Ֆրիկի մօտ աւելի բացայայտ ու զօրեղ է բայց անուրանալիօրէն Կոստանդին Երզնկացիի ստեղծագործութեանց մէջ ալ կան խոր երգիծանք եւ նոյն ատեն արգահատանք պահպանողական հարստահարիչներու դէմ: Երզնկատի կը պայքառի նաեւ եկեղեցական գրականութեան դէմ ու Ֆրիկի հետ կը հիմնէ ժողովրդական գրականութիւնը:

Աշխարհիկ ու սիրոյ երգեր յօրինող Երզնկացի իր դարաշրջանի ամենէն մեծ գրողներէն է: Ան իր բանաստեղծութեանց մէջ կը քարոզէ համամարդկային գաղափարներ:

«Ով որ ընկերոջը փոս փորէ, նախ ինք մէջը կ'իյնայ»: Մտածուք՝ հին է. սակայն Երզնկացիի մօտ նոր փայլ մը կը ստանայ ու կ'արժեւորուի յարակից գեղեցկութիւններու օգնութեամբ:

Բանաստեղծին համար մարդկային սէրը ամէն ինչէ բարձր է: Մարդը իրք երթուածներուն մէջ կը նկատուի ոչ միայն իբրեւ բնութեան ամէնէն կատարեալ գործը որուն անսահման գեղեցկութիւնը ոչ միայն արտաքին համաչափութենէն, բարեձեւութեանէն կը ծորի, այլ նաեւ անոր ներքին, հոգեկան ու մտային աշխարհի կատարելութենէն, «գի ով սէր չունենայ առ ինք չկայ գեղեցկութիւն...»:

Կոստանդին Երզնկացիի տաղերը կը ներկայացնեն Հայ վերածնութեան առաջին հանգրուանը: Իր դարաշնչանին հարազատ ծնունդը ըլլալով Երզնկացի չէր կրնար իր միջավայրէն դուրս գալ, եւ նոյն ատեն ազատագրուիլ քրիստոնէական գաղափարախօսութենէն: Ինչ որ ալ ըլլար Երզնկացիի փափաքը միշտ իր դէմ պիտի գտներ մոռյլ աւատապետութիւնը եւ միջնադարի ընդհանրապէս կաղապարուած յետադիմական կրօնաւորներու ուղեղը: Անոր յատաջդիմական ձգտումը եւ կողմնորոշումը վերջ ի վերջոյ կը կապուի ոչ թէ միջնադարի պահպանողական դասակարգերու հետ, այլ՝ ժողովրդական ամենալայն զանգումներու՝ հասարակ աշխատաւոր դասակարգերու:

Երզնկցի գեղարուեստական խոր պատկերներով կու տայ իր դարուն հակասութիւնները: կը ներկայացնէ հայրենիքի ու բարեկամի դաւաճանները, տգէտները եւ բոլոր բացասական դէմքերը: Կը ներկայացնէ կեղծ մարդիկը որոնք «սուրիաթէ բեսիֆաթ, կան կենդանի ու չեն հոգով եւ չունին աչեր մտաց ու ոչ խօսին Ի մարդ սիրով...»:

Ասոնց կը հակադրէ գիտուն, ուսեալ մարդիկը որոնք անգէտներու մէջ «չարաչար ծառաներ են», բայց ունին շատ բարձր ու գնահատելի յատկութիւններ, որովհետեւ անոնք կեանքի իրաւ հոգին գտած են: Ան շատ անգամ գիտունները ոսկեփայլ արեգակ կ'ընէ որոնց խօսքը այնքան խորաթափանց եւ կենսատու է: Ասոնց հակառակը՝ անգէտներու խօսքը մթամած գիշեր է, որ մարելու աստիճանին հասած է՝ չունենալով ոչ մէկ ջերմութիւն: Իմաստուններու սիրտը գոյնզգոյն ծաղիկներով լեցուած անծայրածիր բուրաստան մըն է, իսկ անգէտներու սիրտը «մութն ու մոլար սառնամանով» լեցուած խոռոչ մը:

Բոլոր գայլերը գառնուկի վերածնում են նոր դիմակներ անցնելով գառնուկներու հետ շրջելով գաղտնաբար կը յափշտակեն: Ամէն մարդ ինքզինք բարեկամ ցոյց կու տայ ուրիշին միակ նպատակ ունենալով անձնական շահը:

Շատեր իբր բժիշկ ասպարէզ իջած են յայտարարելով թէ օգտակար դեղեր ունին: Մակայն իրականութեան մէջ առողջին սիրտը կը խոցեն իսկ հիւանդը մահուան գիրկը կը գետնդնեն:

Շատեր առաջնորդ կը ձեւացնեն ինքզինքնին: Կոյր ու խաւար ըլլալով հօտը կ'առաջնորդէն իրենց մարմնաւորած գահավէժը: Ճարտար լեզուով ու քաղցրբարբառ շոթներով կ'ուզեն քասիտ բնութեամբ շահագործել դիմացինը:

Իրենց բերնն թեթն՝
ծանդրը կամին այլոց համար,
Ու երեւին գիտուն
եւ իմաստուն որ են յիմար,
Հոգի չունին տեսող,
մեղօք հիւանդ ընգել դրժար,
Չմարմինքըն են զարդատել
գեղեցկապէս ու խիստ պայծառ

Հոս ներկայ է աւատապետը: Երզնկացիի պարզագոյն լեզուով ներկայացուած: Ծածկուած է գեղեցկագոյն հագուսներու մէջ եւ զարդարուած է ամէնէն խնամեալ կերպով: Կենդանի մը որ հոգի չունի, մարմնի պարզ քաշքշուք մը: Ապրի՛լ, իր անասնային իմաստով: Չեն հասկնար զիրենց սնուցանողին վիճակը: Ապրի՛լ այս տխուր աշխարհը որովհետեւ մարդ մէկ անգամ աշխարհ կու գայ: Ի՞նչ կարեւորութիւն ունի հոգին եւ անդին դրամը կը պարգեւէ բոլոր երկրային հաճոյքները՝ մսի պահանջք, թոյլ հագստութիւն, թեթն կեանք:

Մինչ անդին գեղջուկը իր քրտինքով ակօսները կը ջրէ, աւատապետը կամ կդերը նոր ծրագիրներ կը մշակէ գտնելու համար ժողովուրդը աղքատացնելու նոր միջոցներ: Մինչ գեղջուկը «օրուան հացը հագի կը գտնէ, անդին աւատապետը ծիրանիներու տակ կորսուած, զինիի շոգիէն արբեցած հեզ վայրկեաններ կը փնտռէ արեւելեան *միմտեռներու* վրայ երկարած:

Կենդանի մարդ գոյութիւն չունի: Հոգիով մեռած են: Կան աչքերով տեսողներ որոնք մեղքերով ծանրաբեռնուած դէպի անլոյս խաւարը կը խորասուզուին:

Ծովուն մէջ կը ծփան առանց նաւի ու նաւավարի: Ալիքներն են մեր առ աջնորդները որոնց խնամքին յանձնուած մէկ բարձունքէն ուրիշ խորութիւն մը չափելու համար: Խաղաղութիւն բառը միայն նպատակ մը, ձգտում մը դարձած է, որովհետեւ չկան խելացի առաջնորդներ:

Իր վերջին քերթուածը սա խորագիրը ունի. «Յաղագս եղբայրութեան բարոյ եւ չարի»: Հոս եղբայրութիւնը մարմնաւորուած է, եղբայր կը կոչուի ընդհանուր մարդկութեան անհատը. քերթուածը ուղղուած է ապերախտ մարդկութեան:

IX. ԵՐԶՆԿԱՑԻՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

Կոստանդին Երզնկացիի փիլիսոփայութիւնը առողջ սկզբունքներու վրայ դրուած է: Աշխարհը ցատերու ու թախծութեան բայց եւ նոյն ատեն ցնծութեան ու բերկրանքի տունն է: Սակայն ամէն ինչ ժամանակաւոր է: Հարստահարութիւնը, Իշխանութիւնը, դիրքն ու պաշտօնը, բոլորն ալ անցողակի են, ուստի մարդ պէտք չէ ըլլայ միամիտ ու անբարտաւան, գոռոզ ու չարամոլ, գծուծ ու բանասարկու, կեղծաւոր ու մատնիչ, այլ՝ «քանի հասնիս ի մեծութիւն խոնարհ կացիր մարդկան ու ցած...»:

Ըն բանաստեղծական թեւաւոր պատկերներով կը խրատէ մարդիկը. չարհամահել աղքատներն ու տկարները, թոյլներն ու անպաշտպանները, տգեղներն ու ֆիզիքական պակասութիւն ունեցողները: Նզովել չարութիւնը, բռնութիւնը եւ ուժը, անարդարութիւնը, յափշտակութիւնը եւ ամէն տեսակ հակամարդկային արարքները:

Հակառակ անոր որ Երզնկացի իր դարուն յառաջդիմական կրօնաւորներէն է տակաւին կրօնական ազդեցութիւնը իր լայն տեղը ունի: Մարդ պէտք է բարի ըլլայ երկրորդ աշխարհին մէջ փափուկ տեղ մը ապահովելու մտատանջութեամբ: Մարդ պէտք է չարիքէ խուսափէ՝ ծերուկ Աստուծոյ հաճոյալի երեւնալու համար: Սակայն ինչ որ ալ ըլլայ Երզնկացիի մարդկայնականութիւնը դը պայքառի բոլոր ժխտական տարրերուն դէմ:

X. ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Երզնկատին բանաստեղծական մեծ մշակոյթ ունի: Ան հայ տաղաշափական արուեստի խոշոր վարպետներէն է: Անոր բանաստեղծութիւնները մասնաւորապէս իրենց գունագեղ լեզուով աչքի կ'իյնան, իրենց պատկերաւորութեամբ ու սահուն ոճով: Օգտագործելով ժողովրդային բանահիւսութիւնը իր անձը մէջը դնելով Երզնկացի գտած է համեմատութիւններ, խորհրդապաշտ տարրեր, նմանութիւններ, Երզնկացիի գրեթէ բոլոր բանաստեղծութիւններուն մէջ մայր բնութիւնը իր հազարաւոր գոյներով կու գայ տեղ գրաւելու: Երզնկացի բնապաշտ մը է, ուրեմն ամէն ինչ բնութեան կը պատկանի. եւ ուրեմն իր մտածումներուն մէջ իսկ բնութիւնը կարեւոր մաս մը պիտի առնէ:

Անթիւ են Երզնկատիի պատկերաւորական գիտերը: Հոս մէջբերել պիտի նշանակէր վերարտադրել ամբողջական տուներ եւ յաճախ տաղեր:

Սիրոյ կարօտը պատկերացնելու համար Երզնկատին ինքզինք կը համեմատէ անձրեւին եւ գարնան անուշ քամիին ծարաղ Երկրին հետ.

Ես եմ կարօտ ի իւր սիրուն՝
Չինչ ծարաւած յերկիր ցօղոյն
Կամ զինչ գարնան անուշ քամուն,
Թէ երբ հնչէ հողմն հարաւ:

ինչո՞ւ համար թագաւոր է վարդը՝ ծաղիկներու մէջ

«Վասն այնորիկ ինք թագաւոր որ համբերէ Ի մէջ փրշաց»

Դարձեալ սա բացատրութիւնը՝

«Ծառքն ծաղիկս ի վեր փնչեն»

Թարմ է, ինչպէ սիր մկարագրած գարնան թեթեւ հովիկ մը:

Իւրաքանչիւր ծառ երկինք կը նայի, գայն գուարթ կը տեսնէ, գոհութեան հառաչ մը կ'արձակէ, եւ այս իւրաքանչիւր հառաչ՝ ծաղիկ մըն է:

Սերմանուած արտերը, ըստ հեղինակին, զուրկ չեն երախտագիտութենէ.

«Վճարեն ըզսերմանողն»:

Եթէ կայ սէր մը անմահական որ հոգի տայ հոգիներուն, կ'ուզէ իր բաժին սէրը ու հոգին առաւօտեան սիրոյն խառնել.

Գայ վարդըն գաղտ ու անգաման.

Ծածկել է գինք կանաչ կապան

Զերդ որ մըտնու մարդ ի տապան

Որ ծաղկընին չեն գետացել:

Հետեւեալ տունը՝ այնքան գեղեցիկ ու անմիջական է: Վարդին համար կ'ըսէ այլաբանութեամբ.

«Կամով ծածկի ի մէջ փըշին

Զերդ որ ի յամբ մըտնու լուսին»:

Այս եւ նման ուրիշ բազմաթիւ պատկերաւոր արտայայտութիւններ Երզնկացիի լեզուին կու տան վառ եռանգաւորում:

Գրողի մեծութիւնը այն է որ գեղեցիկ պատկերներով կարենայ արտայայտել իրականութիւնը, մարդոց մէջ զարգացնել գեղեցկութեան զգացումները, յղկել անոր հոգին ու սիրտը, որպէսզի մարդ կարողանայ ճանչնալ չարն ու բարին, համամարդկայինն ու հակամարդկայինը, բըռնութիւնն ու ազատութիւնը:

Ան իր բանաստեղծութեանց մէջ խտացած կերպով տուած է հազարաւոր մարդոց ծով զգացումները, գեղարուեստական խոր պատկերներով արտացոլած է լայն զանգումներու լաւագոյն ձգտումները:

XI. ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՉԵՒԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Նոր դարաշրջանի ազդեցութիւնը իր մուտքը՝ հասարարական եւ ընդհանրապէս աշխարհիկ կեանքի միջոցաւ՝ յայտնի կ'ընէր մեր հին մշակութային կեդրոններու - վանքերու մէջ: Վանականներէն շատերը արդէն իսկ աշխարհիկ տարրը ներմուծած էին ընդհանրապէս իրենց կեանքին մէջ եւ միայն անունով կրօնաւորներ էին: Տարբերութիւնը շատ քիչ էր աշխարհականներու եւ այդ տեսակի կրօնաւորներուն միջեւ: Ուրեմն այդպիսիները կրօնականին հետ պիտի երգէին հասարակ, աշխարհիկ տաղեր: Գուսանական սիրոյ տաղերն են որ ամէնէն շատ ազդեցութիւն ունեցած են: Սակայն ըստ երեւոյթին տակաւին

գրկաբաց չեն ընդունում այդպիսի աշխարհական բաներու յօրինումը: Միայն Կոստանդինն է աշխարհիկ ոգին տարուած գործածած է նաև գուսաններու սիրած նիւթը «ի գայթակղութիւն» սուտ «եղբայրներու», որոնք նոյնպէս կ'ընդունէին մարմնի իրաւունքը, բայց կը կեղծէին: Մինչ այդ՝ գուսանական ուրախութեան եւ սիրոյ երգերու ազդեցութիւնը վանականներու բանաստեղծութեանց վրայ եղած է աւելի ձեւական կողմէն՝ ոտանաւորին չափերով եւ որոշ քիւով մօթիֆներու ու պատկերներու հետետողութեամբ:

Պետք է ըսել որ գուսանական ազդեցութիւնը երեսն չ' գար միայն Երզնկացիի մօտ: Տասներորդ դարէն սկսեալ այդ կ'երեւի մեր մատենագրութեան մօտ:

Շնորհալի գուսանական տաղաչափութենէն օգտուելով է որ հիմը դրած է մեր արդի բանաստեղծութեան:

XII. ՊԱՐՄԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Եթէ գուսանական բանաստեղծութիւնը մեր միջնադարու բանաստեղծութեան վրայ միայն ձեւական տեսակետով կրօնական հանգամանքներու հետեւանքով ապա պարսկական բանաստեղծութեան բովանդակութենէն ալ պիտի խուսափէին քաղաքական պատճառներով: Մինչև հիմա կատարուած ուսումնասիրութիւնները յստակօրէն չեն կրցած պարզաբանել 13-16-րդ դարու հայ-պարսկական բանաստեղծութեանց յարաբերութիւնը: Բայց այդ չ' նշանակէր թէ պարսկական բանաստեղծութիւնը մեզի, իսկ հայկական բանաստեղծութիւնը պարսիկներուն անձանօք մնացած է: Երկար դարեր ապրելով նոյն տէրութեան մէջ, հայեր իրացուցած են իրանական բանաստեղծութեան մէկ մասը, իսկ Երզնկացիի ժամանակաշրջանին պարսիկ շրջուն երգիչներ մուտք գործած են Հայաստան: Երզնկատի մէկ բանաստեղծութիւնը մեր վերի ըսածը կը փաստէ, «Այր մին մտել կայր ու Շահնամայ ասէր ձայնով, նայ եղբարք խնդրեցին, թէ ի Շահնամայի ձայն մեզ ոտանաւոր ասայ, ես շինեցի սքանքս գայս, ի Շահնամայի ձայն կարդացէք»:

Պարսկական ոտանաւորի հիմունքը կը կազմեն վանկերու երկարութիւնն ու կարճութիւնը: Շահնամայի չափի իւրաքանչիւր ոտքը կազմուած է երեք վանկերէ, որոնց առաջինը կարճ է եւ անշեշտ, երկրորդն ու երրորդը երկար են, ուժեղ շեշտով: Այս չափին իւրաքանչիւր տողը, որ 11 վանկանի է, կազմուած է չորս այսպիսի ոտքերէ.

որոնց վերջինը չունի երրորդ վանկը: Երկու տողը միասին կը կազմեն մեկ տուն եւ նոյնայանգ են:

Վանականները Կոստանդինէն խնդրած են հայերէն լեզուով այնպիսի նոտանաւոր յօրինել, որ կարելի ըլլայ «Շահնամայի ձայնով ասել»: Այսպիսի չափով Հայերենի մէջ իսկապէս հնարաւոր չէ նոտանաւորներ գրել, որովհետեւ Հայոց լեզուն չունի երկար ու կարճ ձայնաւորներ:

Այս ծանօթութիւնը հետաքրքրական է անով որ իրանական աշխարհին բանաստեղծութիւնը մասնաւորապէս 13-14-րդ դարերուն քափանցած են նոյնիսկ մեր վանքերէն ներս, եւ կղերականները հաճոյքով զայն մտիկ ըրած ու Երզնկացիէն խնդրած են Շահնամայի ձայնով նոտանաւորներ գրել: Անշուշտ այս քափանցումը միայն Երզնկայի վանքերէն ներս չէ եղած: Հասարակ ժողովուրդին քով տարածուած է այդ նշանաւոր դիւցազներգութիւնը եւ հետաքրքրականը հոն է որ` պարսկերէն լեզուով: Մատենագրութեան պատմութեան ընթացքին երբեք չէ յիշուած Ֆիրդուսիի քարգմանութիւնը: Անշուշտ եղած են հատուածներու քարգմանութիւններ որոնք մինչեւ մեր օրերը հեքիաթի՝ ձեւով կը պատմուին առանց որ մենք գիտնանք թէ ըսուածը Շահնամային տողեր է:

Երզնկացի «եղբայրներուն» ընդառաջելով կը գրէ Շահնամայի ձայնով նոտանաւորներ: Սակայն պարսկական մեծ դիւցազներգութեան նմանողութիւնը եղած է պարզ ըստ ձեւի:

XIII. ԵՐԶՆԿԱՅԻՒ ՏԱՂԵՐՈՒՆ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

Մեր մատենագրութեան մէջ կարելոր մաս կը գրատէ այն ամբողջ խումբ մը բանաստեղծներու որոնք պատմութեան ծանր փոշիին տակ մնացած ըլլալով պատճառ եղած էին որ իրենց սպրած ժամանակաշրջանը կոչուէր մութ դարեր: Արդի ուսումնասիրութիւնները երեւան համեցին թէ Հայ գրականութիւնը 13-16-րդ դարերուն տուած է մեծարժէք գործեր: Եթէ միջազգային գրականութիւնը մեզմէ արժէք պահանջէ իրեն պիտի որկենք այս շրջանի հեղինակներէն Ֆրիկը, Քուչակը: Կոստանդին Երզնկացիի տաղերը կու գան հարստացնել մեր այս շրջանը եւ նպաստ կը բերեն մեր գրականութեան զանձարանին:

Երզնկացի մեծ է.

1- Երզնկացի իր առջև կը տեսնէ գրական նոր ճանապարհ: Չուզեր նոյն անկերգը երգել: Կը խուսափէ զուն կրօնական դասական նիւթերէն: Ըլլաով զարգացած եւ բնական տաղանդով օժտուած մարդ մը Երզնկացի շուտով կը նշմարէ ընկերային կեանքի մէջ եղած կարեւոր փոփոխութիւնները եւ ինզո՞ք կ'ուզէ պատշաճեցնել իր ժամանակին ու միջավայրին:

Ժողովուրդին մէջ քրիստոնէութիւնը իր սկզբնական հմայքը կորսնցուցած է: Հին հեթանոսական՝ այսպէս կարծուած՝ մեռած ոգին կը վերարծարծի: Խնճոյքներու մէջ հեթանոսական պատմութիւններ կը պատմուին եւ ասոր համար է որ Շնորհալի աշխարհիկ լեզուով առակներ ու հանելուկներ կը գրէ: Ինչ որ ալ ըլլայ ընդհանրութիւնը ժողովուրդը ինքզինք կը պարտադրէ:

Ուրեմն Երզնկացի տեսնելով այս ձգտումը եւ գիտնալով որ կրօնական բանաստեղծութիւնը աւելորդ բան մը պիտի նկատուի ժողովուրդին կողմէ, իր տաղանդը Ի սպաս կը դնէ անմիջական տաղեր գրելու համար: Իր առջև ծաղկող նոր գրական ճիւղ մը կը տեսնէ: Անոր տաղերով մեր գրականութիւնը կը դառնայ աւելի աշխարհիկ: Երզնկացիի ձգտումը կարելի է մեր եզրերով բացատրել սապէս. «Արուեստը ժողովուրդին համար»: Մեր օրերուն երկար վիճաբանութեանց նիւթ եղած է թէ՛ մը «Արուեստը արուեստին թէ ժողովուրդին համար», կը թուի թէ արուեստը ժողովուրդին համար ըսողները աւելի զօրաւոր են: Մեր Երզնկացիին կամ Ֆրիկը կամ բոլոր միւս բանաստեղծները՝ Քուչակ, Մկրտիչ Նաղաշ՝ առանց որ տեղեակ ըլլային այս վիճաբանութեան, բնականօրէն գրած են աշխարհիկ բովանդակութեամբ ու լեզուով:

2- Կուստանդին Երզնկացիի տաղերը մեր գրականութեան կը բերեն նիւթի քարմութիւն: Գոյութիւն չունին ատետարանի մեկնութիւններ, կրօնական տափակ վէճեր: Հոս միայն կայ զարուհի, լոյսը, սէրը: Կարելի չէ վստահաբար գիտնալ Երզնկացիի զգացումները կրօնի ու բնութեան հանդէպ: Սակայն մէկ բան որ երեսան կու գայ այն է թէ աշխարհիկ գրուածքները ապրումով ու ներշնչումով գրուած են մինչ կրօնականները ընդհանրապէս՝ պատշաճումներ:

Կուստանդին Երզնկացի մեր առաջին բնապաշտը կը թուի ըլլալ: Ամէն ինչ բնութենէն ծնունդ առած է: Գարունը, լոյսը, սէրը, առաօտը կ'երգուին նոր եւ գրաւիչ շունչով: Կարծէք մեր նոր գրականութեան արշալոյսը կը բացուի: Հին եւ մաշած ձայներու տեղ նոր եւ թարմ ձայներ կը լսուին: Մոխրագոյն ու սրճագոյն տխրութիւններուն կը յաջորդեն վառ եռանգները բնութեան:

3- Արուեստի նորութիւն: Երգնկացիի տաղերուն մէջ կայ նոր ու կայտառ արուեստ մը: Կեանքի շարժումներու ամբողջութիւն մը եւ ինքնին գեղեցկութիւնն իսկ է: Երգնկացի կը ներկայացնէ այդ կեանքը, իր կեանքը: Որով գրած է ապրումով: Նիւթերը տալու եղանակը ցամաք ու շրթնային չէ, այլ նութերը իւրացնելէ ետք շնորհալի ձեով ներկայացնելու տաղանդը ունի: Պատկերներու գիտարար գործածութիւն ունի: Երգնկատի ունի մտածումներու գեղեցկութիւն եւ բանաստեղծական յաջող գիտեր:

4- Երգնկացի չէր կրնար գրաբարով ժողովրդական երգեր յօրինել: Եթէ յօրինէր իսկ ժողովուրդին համար գրուած ըլլալը ինչպէ՞ս պիտի արդարացներ: Երգնկացի այդ գիտցած է առանց մտածելու եւ իր տաղերը յօրինած ռամկօրէնով: Ան մեր առաջին հեղինակներէն է որոնք գործածած են նոր կեանք առնող ժողովրդական լեզուն:

XIV. ԼԵԶՈՒՆ

Գրաբարը, որուն մահացման զարգացումը նկատելի էր եժ 7-րդ դարէն, հաւանաբար, 10-11-րդ դարերուն արդէն մեռած լեզու էր, միջին հայերէնի զարգացումով դարձաւ գերազանցապէս եկեղեցական գրականութեան սեփականութիւնը:

Ռամկօրէն գրող առաջին բանաստեղծներէն է Երգնկացին: Իր տաղանդէն տարուած Երգնկացի աննախընթաց գործ մը ընելու յանդգնութիւնը կ'ընէ: Բարեբախտաբար այս փորձը ոչ մէկ ձեով կը վնասէ բանաստեղծին լեզուին ճկունութեան: Երբ Տանդէ Աստուածային Կատակերգութիւնը կը հիւսեր, Արեւելքի մէջ Երգնկացի աշխարհաբարով քերթուածներ կը գրէր:

ԺԳ դարուն հայերէնը շատ ազդուած էր թուրքերէնէն ու պարսկերէնէն. սակայն այս ազդեցութիւնը աւելի հարստացուցած է գեղարուեստական ձեւն ու բովանդակութիւնը:

Երգնկացիի ոտանաւորները ունին լեզուական տարբերութիւն: Բոլորը նոյն լեզուով չեն գրուած: Ամէն մէկը իւրայատուկ լեզու մը ունի: Պատմական կամ կրօնական գրուածքները գոտ հայերէն են:

Երբ կ'ըսենք թե Երզնկացիի լեզուն աշխարհաբար է, այդ պարզ փոքր զարգացում ու անջատում է գրաբարեն: Կարգ մը հիմնական բաներ կը մնան գրաբար: Քերականական կանոնները շատ քիչ տարբերութիւն ունին: Այսուհանդերձ լեզուի ոճը բոլորովին նոր է: Այնպիսի բաներ կ'ըստ որոնք շատ դժուրութեան պիտի մատնէին գրաբարով գրողը:

Կոստանդինի մօտ տաղաչափութիւնը մեծ ազդեցութիւն ունեցած է քերականութեան վրայ. յանգը ու յատածը նոր ձեւեր տուած են, հոլովներու ու խոնարհումներու ձեւերը փոփոխուած է: Բառ մը յոգնակի ընելու համը *նին* կ'աւելցնէ եզակիին վրայ - ծաղիկ, ծաղկընին - դեռ իր քով «այնորիկ»ը «անոր» չէ եղած, միայն «իկ»ը ձգելով՝ «այնոր» մնացած է. նախադրութեան յաջորդող գոյականը ուղղական կը դնէ, ինչպէս «առանց շրթունք», փոխանակ «առանց շրթունքի» ըսելու, անկատարին *էի*-ն կը ճատուած է եւ պարզապէս *ի*-ի վերածուած. *իր* կը նշանակէ *իրեն*. *չունի* կը նշանակէ «չունէի»:

Բայի զեղչումները սովորական են Երզնկացիին տաղերուն մէջ: Այս պատճառով է որ իմաստները յաճախ տարտամ ու անհասկնալի են:

Երզնկատիի բառապաշարին մէջ տեղ գտած են պարսկական, քրքական ու քաթարական բառեր՝ բեսիֆաթ, դապուլ, ջուհար, հասրաթ, եասիր, եար, հայրան, մճիխ, քան, քամամ, խերմըզի, ճար, մալ, սազ, սարխաօշ, եայլ:

XV. ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆԸ

Երզնկացիի տաղաչափութիւնը ընդհանրապէս յանգաւոր է: Մովորաբար նոյն յանգն է որ կը վերջացնէ բոլոր տողերը միեւնոյն քերթուածին:

Հայկական բանաստեղծութիւնը երկուքի կը բաժնուի մեր մէջ, *կրօնական* եւ *ժողովրդական*: Կրօնական ըսելով չենք հասկնար այն բոլոր տաղերը որոնք կրօնական նիւթ կը պարունակեն: Այդ անունին տակ կը հասկնանք միայն *Գանձերն* ու եկեղեցական *Տաղերը*:

Այդ կրօնական բանաստեղծութեանց մէջ տաղաչափութիւնը շատ մը տեսակներով գործածուած է. հնգտոնեայ, երկոտանի՝ վեց ձեւով, եռոտանի՝ վեց եօթ ձեւերով:

Կոստանդինի տաղերուն տողերը ընդհանրապես երկայն են. քսանէն աւելի տաղաչափական ձևեր ունի:

Թէ Երզնկացի պարսկերէն գիտեր այդ յստակ է. բառերը կը գործածէ: Նկատի պէտք է ունենալ թէ մասնաւորապէս ԺԳ դարուն պարսիկ քերթողութիւնը կը շրջէր Արեւելքի մեծագոյն մասին մէջ եւ մեր բանաստեղծներն ալ Պարսից տաղեր կ'երգէին: Ֆիրտուսի՝ որ Կոստանդինէն երեք դար առաջ ապրած ու գրած էր իր «Շահնամէ»ն տակաւին Հայոց մէջ իր ժողովրդականութիւնը կը պահէր: Ինչպէս տեսանք Երզնկացիի մօտ յատկանշական յայտնութիւն մը, պարսիկ բանաստեղծութիւնը՝ որ իր կարգին ազդուած էր արաբականէն՝ մեծ ազդեցութիւն ունեցած է հայ ժողովրդական-բանաստեղծներուն վրայ, ինչ որ չէ կրցած ընել կրօնական տաղաչափութեան վրայ: Երզնկացին ալ կը գտնուի պարսկական տաղաչափութեան ազդեցութեան տակ:

Պարսկական գլխաւոր նմանողութիւնը այն է՝ որ տաղին չափը լրացնելու համար շատ անգամ յաջորդ բառէն մէկ կամ երկու վանք կ'առնէ. եւ կամ եթէ չափը բառ Ի մը կէսին վերջանայ, մնացեալը կէսը կ'անցնէ յաջորդ հատուածին: Այս գործածութեան ձևը շատ հազուադիւր է մեր կրօնական տաղաչափութեան մէջ:

Պարսկական ուրիշ մէկ ազդեցութիւնը կը նշմարուի յանգերուն մէջ: Կոստանդինի ԺԳ քերթուածին մէջ, ոտանաւորին երրորդ տողերը ազատ յանգ ունին. այսինքն՝ ա, բ, եւ դ տողերը նոյնայանգ՝ իսկ գ-ը որեւէ յանգով վերջացած:

Օրինակ մը՝

Կամեցայ բանք մի քանի խրրատ գըրել
Ով կամի ինձ ի սըրտէ ականջ դընել,
Ով ուզէ խօսք պիտեան հոգով սիրով
Նայ իր շար որ հասանէ կամ պատահել:

Ասոր նպան ուրիշ ձեւ մըն է չորրորդ տողի ազատութիւնը, օրինակ մը՝

Իմ պիղծ լեզուովս եւ անմաքուր
Չկարեմ մերձիլ յանշէջ ի հուր,
Լքո՛ւ լեզուս եւ կամ ի լուր՝
Չի անքընին մըտաց դու ես:

Երզնկացիի մօտ նկատելի է մատնախառն ազատութիւնը:

Կոստանդին ի՞նչ չափերով կը գրէ.

Երզնկացիի քերթուածները ընդհանրապէս չորս հատուած ունին: Կարգ մը քերթուածներ ութնուոնեայ են երկու հատուածներով, իսկ ուրիշներ երեք հատուածներու բաժնուած 3-4-4:

Երզնկացիի մօտ նակատուած հատուածները հետեւեալներն են. 4-4, 3-4-4, 4-4-3, 2-3-3-3, 2-4-4-4, 3-3-4-4, 4-4-4-3:

XVI. ՎԵՐՉԱԲԱՆ

Մինչեւ քաներորդ դարու սկիզբը 13-16-րդ դարերը կը համարուին մարած դարեր: Վերջին ուսումնասիրութիւնները ցոյց տուին թէ մենք այդ դարերուն բաւական գործ տեսած ենք: Մենք ալ կեանքը իր ամբողջութեան մէջ ապրելու եղանակը գիտցած ենք մեր ինքուրոյն ձեւերով: Աւելին, մեր բանաստեղծութիւնը Երոպականէն շատ առաջ թօթափած է միջնաբարեան ոգին: Ազատախոհական յնդգնութիւնները, տարակոյսը, բողոքը, պոռթկումներով գոյութիւն ունեցած է: Ասոր պատճառը պէտք է փնտռել Հայոց Արեւելեան զարգացած մշակոյթի հետ շփումին ու Հայ ժողովուրդի բնական ընդունակութեան մէջ:

Այն մեծ առաջնորներէն որոնք ոգիի յեղաշրջում բերին է մատնախառն Երզնկացի՝ բանաստեղծական աշակերտը Նարեկացիի եւ ազդեցիկ ուսուցիչը շատ մը աւելի երիտասարդ տարրերու: Կոստանդին Երզնկացի խոշոր նորարար մըն է. ան մեր գրականութեան մէջ զարգացման աւելի բարձր աստիճանի հասցուց բնապաշտական բանաստեղծութիւնը: Ինքն է հիմնադիրը սիրային բանաստեղծութեան, որ իրմէ ետք տրապետող նիւթը եղաւ:

Իսկ ինչ կը վերաբերի Երզնկացիի ազդեցութեան վրայ, պէտք է ըսել որ Գրիգորիս Աղթամարցին, Դաիթ Սալաձորեցին եւ ուրիշներ բաւական պարտաւոր են անոր: Մանաւանդ Սալաձորեցի մեր բնութեան մեծագոյն երգիչներէն մէկը, այսպէս կոչենք Երզնկացի կը բուրէ:

Այս է Կոստանդին Երզնկացիին իր տաղերէն եզրակացուած: Կրօնաւորը եւ զգայուն բանաստեղծը ապրող մարմնին: